

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՐԱՐԱՏ-ՈՒՐԱՐԴՈՒ-ԱՐԾԿԷ

Արարատեան գաւառ եւ թագաւորութիւն երկու հատ կայ ճանչցուած մեր պատմութեան մէջ: Մէկը՝ Երասխի հովտին մէջ՝ ամենուս ծանօթ հիմակուան Արարատն է, «միջնաշխարհ Հայաստանի» (Բիւզանդ), «կայք թագաւորացն եւ քահանայապետացն» (Կորին), «աշխարհ, տուն տանուտէրական» (Սեբէոս): Իսկ միւրը՝ առջինէն շատ հինօրեայ՝ Ասորեստանցոց արձանագիրներէն ու Հին կըտակարանէն ճանչցուած՝ Ուրարդու-Արարատ, որուն տեղը չէ ճշգուած բայց որ պէտք է ըլլայ, ինչպէս կ'ընդունին հիմա գիտունները, վանայ ծովուն արեւմտեան հիւսիսային կողմերը, տարածուելով հարաւ դէպի Կորդուաց լեռները:

Այս երկուքը երբեմն կը շփոթուէին իրարու հետ, որով թիչ մտայ եւ խառնակութիւն չէր ձգուեր Հայաստանի հին պատմութեան եւ աշխարհագրութեան մէջ, բայց վերջերը վերցուեցաւ այդ շփոթութիւնը, թէպէտ Քրոֆէսուր Բէլքի նման հայադէտ մը որ անձամբ պտոյտ ըրած է այդ կողմերը, զեռ մէկը միւսին տեղ առնել կը թուի, հիմակուան Արարատի կողմերը փնտռելով Ուրարդու-Արարատի մայրաքաղաքն եղող Արզասկուն, եւ ասոր մօտը բարձրացող Արզուրի լեռը Ակոռիի հետ նոյնացնել առաջարկելով:

Այսպիսի անտեղի սխալ մը չպիտի գործուեր մեծ գիտնականէ մը եթէ այս Արզասկուն մայրաքաղաքին դիրքը ճշգուած ըլլար: Կը հասկցուի ուրեմն թէ ո՛րքան կարևոր է այս ճշգումը, թէ՛ պատմական եւ թէ՛ աշխարհագրական տեսակէտով, եւ ո՛րքան պիտի պարզուէին անով Հայաստանի հողին վրայ ամենէն առաջ ծնունդ առած թագաւորութեան վերաբերեալ շատ մը խնդիրներ, որոնք զեռ անլոյծ կը մնան:

Այս կարեւոր քաղաքը՝ որ ցարդ ծածկած էր ինքզինքը գիտուններու խոյզէն, բազմ ունեցայ գտնելու վերջապէս: Մեր ծանօթ Արծկէն է այն, վանայ ծովուն հիւսիսային արեւմտեան ափը: Արծկէն էր ուրեմն Ուրարդուի անբախտ Արամ թագաւորին արքունի ոստանը, որ

Արակի կործանելէն ետքը անցաւ իր բոլոր երկիրներուն հետ՝ վանեան թագաւորներուն, քանզի Արծկէն կը գտնենք հինգերորդ դարուն Ղազար Փարպեցիէ յիշուած իբր Բզնունեաց երկրին մէջ, եւ Արծկէի մէջ վանեան թագաւորի մը (Ռուսաս Բի) մէկ արձանագիրը գտնուեցաւ երկու տարի առաջ:

Թէ՛ լեզուաբանօրէն եւ թէ՛ պատմականօրէն անհրաքելի է այս գիւտին ճշգումը: Արզասկուն սղմամբ կ'ըլլայ Արզկուն, եւ Ասորեստանցոց գին համապատասխան է մեր ծն եւ երբեմն ձն, եւ անոնց ու ին մեր ան կամ են:

Պատմականօրէն ալ աւելի պայծառ է ապացոյցը: Սարմանասար Բի արձանագիրէն գիտենք հետեւեալ երկիրներուն դիրքը—«Դսիսանիէ մինչեւ Արզասկուն, Արզասկունէ մինչեւ Կիրզան, Կիրզանէ մինչեւ Խուփուսկիա»: Ասով Դսիսանի եւ Արզասկուն գրացի կ'ըլլան: Արզաքե Դսիսանի—Տայք, գիտենք վանեան արձանագիրներէ, կ'իյնար Արծկէի հիւսիսակողմը՝ Մանազկերտի մօտերը, եւ կը տարածուեր մինչեւ Կարինի արեւելեան հիւսիսը:

Արզասկուի մօտերը կը բարձրանային երկու մեծ լեռներ՝ Արզուրի եւ Երիտիա: Իրօք՝ Արծկէի ալ մօտերը կը բարձրանան երկու մեծ լեռներ՝ Սիփան—տաղ, եւ Նիմրուտ—տաղ:

Այս գիւտը կարևոր է նաև անով որ կ'օգնէ ճշգելու Ուրարդուի գրացի երկիրներու դիրքը, ինչպէս, օրինակի համար՝ Կիրզան (Խիզան?) որ հարաւը պէտք է ըլլայ Ուրարդու—Արծկէի երկրին, ինչպէս հիւսիսը գտանք Դսիսանի—Տայք:

Հիմա կրնանք դադափար մը կազմել Հայաստանի հողին վրայ ծնած առջինեկ Հայ թագաւորութեան մասին:

Ասոր կեդրոնն էր վանայ լճին արեւմտեան հիւսիսային ափը, ուրկէ կը տարածուէր լճին եզերող երկիրները դէպի հարաւ մինչեւ Կիրզան (Խիզան) եւ Խուփուսկիա, արեւմտեան հարաւը՝ մինչեւ Մուսասիր—Մուշ, դէպի հիւսիս մինչեւ Մանազկերտ ու Արածանի, եւ արեւելքը՝ վանայ լճին արեւելեան հիւսիսային կողմերը մինչեւ Արծկէի երկիրը: Հաւանօրէն անոր մասը կը կազմէին նաև վանայ լճին հարաւային ափը Ռշտունեաց ու Մուկաց երկիրները:

Կը տեսնուի որ համեստ տարածութիւն մը ունէր Արամի թագաւորութիւնը, շատ համեստ՝ համեմատելով

անոր յաջորդող վանեան թագաւորներուն իշխած երկիրներուն հետ, զորս այդ փառասէր եւ արի թագաւորները շարունակ ընդարձակել կը ջանային արշաւանքներով հիւսիս Տայոց երկիրը և Շիրակ, արեւելք՝ Երասխի հովիտը, հարաւ՝ մինչեւ Ուրմիոյ լճին արեւմտեան կողմը եզերող Մաննացոց երկիրը, և արեւմուտք՝ Հատեանց երկիրը մինչեւ Բալու և Մելիտանէ։

Բայց Արամի թագաւորութեան նշանակութիւնը ներքին չէ վար գարնել, զի առաջին փորձն է այն գերիշխանութիւնը մը հաստատելու Նաիրի կոչուած երկրին բազմաթիւ ցեղակից մանր տանուտէրներուն վրայ՝ որոնք ուրոյն գոյութիւն ունենալով հանդերձ՝ մէտ էին միանալու և գործակցելու հասարակաց թշնամիին՝ Ասորեստանցիին դէմ, երբ այս վերջինը կը սպանար, կամ կուգար իրենց երկիրները արշակել։

Սակայն Արամի այս գերիշխանութիւնը ուղղակի, կարեւոր արդիւնքներ չկրցաւ ունենալ, քիչ ատեն միայն տեւելուն։ Տևողութեանը վրայ գաղափար մը կազմելու համար պէտք է սա թուականները միտք բերել։ Ն. Բ. 1020ին Տիկլաթ-Պիլէսէր Ա երբ Նաիրի տանուտէրներուն վրայ յաղթութիւններ տարաւ՝ իր ձգած արձանագրին մէջ չի յիշեր բնաւ Ուրարդուի թագաւորութիւնը։ Ոչ ալ կը յիշուի այն Ասորեստիւրպալէ (883-858) որ բազմաթիւ արշաւանքներ ըրաւ Տիգրիսի և Եփրատի աղբերականց կողմերը եւ վանայ լճին հարաւը դանուող կիրզան ու խուփուսիկա երկիրները, (Թէև վանայ լճին հիւսիսային կողմերը անցած չի թուիր)։ Ասոր որդին Սալմանասար Բ (858-824) առաջինն է յիշող Ուրարդուն և Արամը, եւ ինքն է նաև մահացու հարուածը սուղը պղ թագաւորութեան որ 833ին արդէն անցաւ վանեան թագաւորներու նոր հարստութեան մը որոնց մայրաքաղաքն էր վան։ Ասոնք շարունակելով Արամի թագաւորութիւնը և Նաիրի երկիրներու վրայ գերիշխանութեան գերը՝ նոյն Ուրարդու անունով ճանչցուեցան և յիշուեցան Ասորեստանցիներէն, անուն մը զոր վանեան թագաւորները իրենք իրենց չեն տար բնաւ իրենց ձգած բնիկ լեզուով արձանագրիներուն մէջ։ Իրենցմէ առաջինը «Նաիրի թագաւոր» բարձր տիտղոսը կ'աննէ վարան, իսկ իր յաջորդները կը մասնաւորեն իրենց տիրուող տէրիւնց թագաւորութեան բուն կալուածին ու կայանին անունով կոչելով ինքզինքնին վանայ երկրին թագաւոր։

Ինչ որ Արամ փոքր շրջանակի մը մէջ և յազազրու կերպով միայն կրցաւ ընել, վանեանց աւելի ընդարձակորէն և հաստատուն կերպով գործադրեցին երկու դար՝ մեծ յաջողութեամբ ու փայլով, մինչեւ որ Ասորեստանցիք անոնց յառաջխաղացութենէն և անհցուն ազդեցութենէն իրենց գերիշխանութեան վտանգ տեսնելով՝ մտքերնին գրին ջախջախել զայն իրենց բոլոր ուժը թափելով և հարուած հարուածի վրայ տալով, և վերջ ի վերջոյ հասան իրենց նպատակին։

Դիւրին է տեսնել թէ այս Արարատեան թագաւորու-

թիւնը բոլորովին տարբեր է մեր պատմիչներուն ծանօթ Արարատայ աշխարհին թագաւորութենէն որ հետի է Արմկէն ալ՝ վանէն ալ։ Այս վերջինին երեւումը պատմութեան մէջ տարբեր կեդրոնի մը մէջ է, և տարւեր ցեղի մը գործն է, այն է Ալարատեանց զորս կը յիշէ Հերոդոտոս։ Այս Ալարատեանց արդարեւ կը զրաւեն ճիշդ նոյն տեղը զոր ունի մեր ծանօթ Արարատայ աշխարհը։

Դարեհ իր մեծատարած իշխանութեան երկիրներուն վարչական բաժանումին մէջ ԺԸրդ նահանգ կազմելով Ալարատեանց-Արարատեանց երկիրը՝ Մադիէնեանց (Մարաց) և վրաց հետ, նոր Արարատեանց զրաւած դիրքը կը մատնէ, անոնց կարեւորութիւնը կը յայտնէ։ Դարեհէն ետքն ալ այդ Ալարատեանց Արարատ աշխարհն էր որ գերակշիռ դերն ունեցաւ Արմէնիոյ պատմութեան մէջ, ոչ թէ վանայ լճին շրջակայքը գտնուող երկիրը։

Այս Ալարատեանց Արարատն է, որուն դարձեալ կ'ակնարկէ Գսենոփոն Արեւելեան Արմէնիա անունով։

Պողոթնոսի յիշած Գագաւորը Արմէնիոյ Արեւելեան Հայաստանի մէջ է։ Ն. Բ. 190ին թագաւորող Արտաշէսը Արտաշատն ունի իրեն մայրաքաղաք։ Եւ Ստրաբոն կ'աւելցնէ իր վկայութիւնը թէ այդ Արտաշատի գաւառին վրայ աշխարհակալութեամբ յաւելումներով է որ գոյութիւն ունեցաւ Տիգրան Բ ի մեծ Հայաստանը։

Այսպէս՝ նորոգ կեանքն ու կենդանութիւնը Արեւելեան Արմէնիայէն՝ Արարատէն կուգար։ վանայ լճին շուրջը հին կենդանութիւնը ու գորութիւնը ինկած՝ հատած էր Ասորեստանցիներուն կատաղի ու յամառ յարձակումներուն երեսէն։

Նոր արին՝ նոր տարրեր եկան կազմելու նոր Հայաստան մը, այսինքն արեւելքէն՝ Ալարատեանց, արեւմուտքէն՝ Հատեանց։ Առաջինները սուին մեզի Արարատեան անունը, և վերջինները՝ Հայ անունը։

Իսկ օտարներուն մեզի տուած Արմէն անունը կը պարտինք բոլորովին տարբեր ժողովրդի մը՝ այն է Մաննացոց։ Ասոնք վանեանց զրացի են հարաւ արեւելքէն, եւ Ուրմիոյ լճին երկայնքը եզերող երկիրը բռնած էին։ Այս ժողովուրդը՝ որ շատ հին ժամանակներէ ի վեր գոյութիւն ունէր և ճանչցուած էր Ասորեստանցիներէն, յաճախ կը կրէր ասոնց յարձակումները, եւ շատ անգամ վանեանց գերիշխանութեան տակ ու անոնց դաշնակցելով՝ և երբեմն թշնամիին առջեւ խոնարհելով՝ կրցած էր փոթորիկը անցընել և իր անկախութիւնը պահել, մինչ վանեանց աւելի յանդուգն ձեռնարկները և բուռն ընդդիմադրութիւնը իրենց վրայ մասնաւորապէս հրաւիրած էին թշնամիին ամենէն մոլեղին թափը՝ եւ իրենց սպառնալու կործանումը ըզձալի դարձուցած էին։

Երբ Սալմանասար Բ և Սարգոն Ասորեստանցոց թագաւորները այսպէս աւերեցին և փճացուցին վանեանները, Մաննացիք համեմատաբար անփնաս մնացին ու կարողութիւն ունեցան Մարաց հետ նիզակակցելով՝ գործակցել Նինուէի կործանման 606ին Ն. Բ. Այս մեծ զէպքին մէջ Մաննացոց ալ դեր ունեցած ըլլալը բնաւ

կանաբար իրենց անուան հոչակը աւելցուց, և Մարաց իշխանութեան յաջորդող Պարսիկները՝ որ երբեմն Parsu-as անունով ճանչցուած էին և Մաննացուց հետ զբացնութեան մէջ կ'ապրէին, Մաննացուց երկրին արևմտեան լեռնոտ ներքնագաւառներն ալ՝ այսինքն Վանն ու Վանայ լճին շրջակայքը այդ ծանօթ ժողովրդին անունովը կոչեցին Հար-Միննի, կամ Արմէնիա, ինչպէս Գերմանացուց մէկ ցեղին ծանօթ Ալէմանիներուն անունով՝ բովանդակ երկիրը Ալմանիա կոչեցին ոմանք:

ԱՐԹՕ

ՍԱՅՔՕ

Գեանգերը, աշնան եղերական վերջալոյսին մէջ միս մինակ, կը մամտայ Սայքօ:

Իր կտրիճ հասակը կը թնցուցած է ան մինաւոր քարի մը որ հողէն՝ ըզձանքի ցայտումի մը պէս՝ իրեն կ'երկնայ հոգ:

Սայքօ արտում է, արտում: Անոր հպարտ ու խաւփիչ լանջքը, կսկիծէն աւելի ուռած, հասունցած, լաշակին տակ կ'ելլայ կ'իջնայ, փոթորկած կոհակի մը պէս որ ներսէն փրփրար:

Հեռուն, գետին անդիի եզերքէն ծաւալող անսահման դաշտին ծայրը արինոտ արևը կը թաղուի կաս կարմիր, ու իրիկուան ստուերները կ'իջնան, կը աւարածուին գիակնային հորիզոնին վրայ, թափանցիկ պատանքներու պէս պարուրելով զայն:

Ընթրիքի ժամը մտտեցած է, ու Սայքօ կը յամենայ զեռ հոն, իր սեւեռեալ մտածումին մէջ մխրճուած, անշարժացած, ու իր պաշտելի աչքերուն լուսապայծառ սեւութիւնը՝ խելայեղօրէն բացուած նայուածքով մը սեւեռած գետին երկններանդ վազքին վրայ:

* *

Գեղին էն ազուր ալշիկն է Սայքօ: Վայրի առատ գեղեցկութիւն մը սրուն հրոշալի կերտումին մասնակցեցան՝ երկար, տարփոտ ու արգաւանդ զրկնվխառնումի մը մէջ՝ շրջակայ բնութեան բոլոր յաւիտենական գեղեցկութիւնները:

Լեռներու մայրական ստուերին զովութեանը մէջ հեշտալիօրէն, զրեթէ ակամայ, բարձրացաւ Սայքօին նագելի ու խրոխտ հասակը: Գետին հեշտամուլ ալիքներուն զիրկը ճերմկեցաւ ո՛ հրաշակերպեցաւ իր զինվցընոյ, ակնապարար մարմինը: Դաշտերը իրենց սևորակի ծաղիկներուն խնկաբայր ծպիտը հասցուցին անոր աչքերուն խորը: Ու երզող անսառնիկ հեշտահրաւէր ներկաչնակութիւններուն մէջ, Սայքօին մազերը՝ անոր ծոծ

րակին ճերմակութենէն խնդեցած՝ անոր կաթնադոյն ազդերուն հասնիլ տենչացին ու մինչեւ անոր ստեղծուն գարշապարները համբուրելու իջան:

Տասնրկեց տարեկան՝ արդէն կին մըն էր Սայքօ, հոյակապօրէն շինուած կին մը որ գեղին արբունքի հասած տղաքներուն ըռնը վրդովող յայրատ յաճախանքը եղած էր ալ եւ որուն ետեւէն, ճամբաներուն վրայ, կարգուած տարուք մարդիկն անգամ զլուսնին կը դարձնէին ակամայ, ամպարիշտ ու անգիմազրելի սարսուռէ մը թօթուած հետեւելով պահ մը դանդաղ ու ցնորատու եւեկին անոր աննման բարձրերուն:

Չարաշուք օր մը սակայն Սայքօին ետեւէն հառաչողներուն վրայ վայրագ հիացող մըն ալ աւելցաւ, ու Սայքօին աստղը ամպոտեցաւ այն գիշեր:

Երիտասարդ քիւրտ պէյ մը, իր ձիաւորներով գեղէն անցած ատեն տեսաւ Սայքօն որ կուշտին վրայ կուժ մը բռնած, աղբիւր կ'երթար երերալէն: Հասան մէկէն կանչ առաւ, իր հետևորդներուն ալ հրամայեց կենալ, ու քանի մը վայրկեան, սահմուկած ու վալաշոտ նայուածքով մը Սայքօին ետեւէն նայեցաւ: Յետոյ ճամբան շարունակեց:

Ալ բան մը չկրցաւ մոռցնել Սայքօն քիւրտ պէյին մաքին մէջ: Անիկա վրանը մտաւ նեղսիրտ ու խոժոռ, ու իր բալոր գեռատի կիներուն փութկոտ ու անձնատուր գզուանքները ետ հրեց: Կոնակը անոնց պարձուց ու քնանալ փորձեց: Բայց իր աչքերը յամտեցան բաց մնալ ու անոնց առջև տնկուեցաւ շարունակ Սայքօին զըրգոիչ պատկերը:

Հասան երկար ատեն տապալակեցաւ անկողնին մէջ, ըզձանքին մոլուցքէն հրդհուած ու յազեցումին յապաղումէն մոլեգնած:

Անկէնը, ստուերին մէջ, իր սղբալի կիները, քով քովի ծունկի եկած, կը լռէին, շուարումէ, վախէ ու ցոսկութենէ հեւալով:

Հասան բարձրուն պլլուած, անոնց վրայ թօթուրտալով սկսաւ պոռչտել: Հայուն աղուոր աղշիկը պէտք էր իրեն... Ու աչքերը արինոտած, իր հոլանի կիներուն աղաչաւոր նայուածքին տակ, Հասան՝ ոռնալէն, կառչելէն, հոնդալէն թմրեցաւ ինկաւ այն գիշեր, վրանին մէջ, Սայքօին մտածելով...:

* *

Յաջորդ օրը Հասանի առաջին գործը եղաւ Սայքօն առևանգելու միջոցներուն խորհիլ: Երբ ունենալու կը նիկներ զրկեց Սայքօին գեղը, անոր վրայ տեղեկանալու համար: Ու սպասեց:

ԳՏԻ անլուր հալածանքներուն հերոսական շրջանին սկիզբներն էր: Գիշեր մը, խուճապի ու անձկութեան զիշեր, քիւրտ պէյը իր զինուած ձիաւորներով՝ աւերուժի ուրականի մը պէս՝ ինկաւ գեղին վրայ:

Դոնները կոնակի վրայ բացուեցան խորտակուած, ու յուսահատութեան ու արհաւիրքի վիթխարի վայնասուն

մը ժայթքեցաւ տանիքներէն, խոյացաւ գիշերին ամա-
լի մթութեան մէջ:

Ասիկա ժամ մը տեւեց: Երբ քայքայումի աղաղակ-
ները դադրեցան, անոնց վրայ իջնող մահասարսուռ լը-
ռութեան մէջ, հեռուէն, գեղին բացէն, լսուեցաւ քիւրտ
ձիւտորներուն քառատրոփ քստաձեւի վագըը ու երիտա-
սարդ աղջկան ոգեսպառ աղիողորմ ձայներ որ օգնու-
թիւն կը ճուային:

Հասան՝ անհամբեր Սայքօին տիրանալու՝ չէր ուշա-
ցեր գեղին մէջ անօգուտ ու երկարատեւ շահատակու-
թիւններու: Իր գինակիցներուն թող տուեր էր որ մէյ
մէկ հայ աղջիկ առնին իրենց համար, ու կիսամերկ Սայ-
քօն կուրծքի՝ վրայ սեղմած, անոր թարմ միտին հոտէն
զսղահար՝ դէպի վրանը կը շտապէր հիմա:

Սայքօ կոյս վագրի պէս մաքառեցաւ հոն քիւրտ պէ-
լին կոյր տոփանքին դէմ: Հասան՝ մողեղին՝ հրամայեց
իր կիներէն չորսին որ գան Սայքօին ծունկերէն ու ու-
սերէն բռնեն եւ զայն անկողնին վրայ տարածեն:

Քրդուհիները իրենց զրկուած էգի հպարտութեանը
մէջ վիրաւորուած ու սրտմտած՝ համակերպեցան սակայն
իրենց տիրոջ վայրագ կամքին: Նախանձէ ու զայրոյթէ
դողդղալով մօտեցան անոնց Սայքօին, իրենց լերան աղ-
ջիկի բոլոր կորովը թափեցին զայն զգեստնելու համար,
ու զլուխնին ետեւ դարձուցած՝ ներկայ եղան Սայքօին
իրենց արուևն լլկումին...:

Սայքօ Հասանի հրակէզ ու լորձնուտ համբոյրին սակ
անհնարին դալարումներով աղերսելէ, քֆրելէ, հեծկտալէ
ընկճուած՝ անգիտակցաբար աչքերը գոցեց գարշումի ու
հեշտանքի տարօրինակ թմրութեան մը մէջ անէացած:
Անտառին առօրէ ու զգայնոտ կուսութեանը մէջ արձակուած
բորենիի դիմեմ ունումին պէս՝ անոր կենսայիցը մի-
տին մէջ այդ պիղծ ու բնական հպումը բանաւորօրէն
արթնցուցած էր անձանթ ու արգաւանդ սարսուռը:

Ու Սայքօ՝ զգայագիրկ՝ պահ մը մնաց հօդ, կըռ-
նակի վրայ, իր ձիւնեղէն մերկութիւնը հրաշափառօրէն
տարածած արինչուայ անկողնին մէջ: Կիները արդէն
հեռացած կին վրանէն ու Հասան՝ անգորբած՝ անկիւն
մը կեցեր իր շուպուխը կը ծխէր, զմայլանքի ու յղփա-
ցումի կարմիր տամուկ նայուածքով մը Սայքօին պարձած:

* *

Հասան երկու ամիս Սայքօն վայելելէն վերջը, որ
մը, գեղին ճամբան առաջնորդեց զայն իր ընկերուհի-
ներուն հետ ու ձգեց որ տուներնին դառնան:

— Գացէ՛ք, կեանքուրի աղջիկնե՛ր, գացէ՛ք, առանց
ետեւնիդ նայելու...:

Հայ աղջիկները իրիկուան զէմ գեղ մտան խումբով,
գունաթափ ու լալագին:

Յանցաւորի ու զոհուողի հակումով մը զլուխնին կոր
կուպային իրարու ետեւէ, իրենց սպանուած կուսութեան
սուզին տակ կարծես ընկճուած: Սայքօ առջեւէն կ'եր-

թար սակայն, դաժան ու սքանչելի, իր բաղդակից քոյրե-
րուն համակերպութեան մէջէն՝ կատաղութեան ու վրէ-
ժի դրօշակիր՝ իր հոյակապ դուխը վեր բռնած:

Անոնց անակնկալ վերադարձը յուզումէն տակնուվը-
րայ ըրաւ ամբողջ գիւղը: Տուներէն դուրս խուժեցին
ամենքը, երանութեան աղաղակներով ու օրհններով:
Ու խանդակաթ գիրկընդխառնումներու մէջ թափուած ար-
ցունքի հեղեղները մաքրագործեցին խեղճ լլկուած աղ-
ջիկները:

Անմիջապէս գեղին ամուրի երիտասարդները փու-
թացին կին առնել իրենց կուսութենէն այդ ցաւազին
սրբացածները, ու գեղին տէրտէրը հեւ ի հեւ աճապարեց
սպաւոր հարսնիքներու շարք մը օրհնելու:

Բայց Սայքօ շուրջեց ընդունիլ իրեն եղած ամուս-
նութեան առաջարկը: Ռէս Մարշարին տղան էր իր թեկ-
նածուն, ու Սայքօին շուարեցնող մերժումը գիւղացի-
ներուն մէջ գայթակղական համեմատութիւններ սկսաւ
առնել:

Տէրտէրը, իր մայրը ու զբացի պառաններ ի զուր մի-
ացան ու ջանացին զայն համոզել, ի զուր կրկնեցին ա-
նոր միաներուն օրինակը որոնք կարշուեր, աուն տեղ
էին եղեր հիմա:

Սայքօն անզրդուելի կը մնար իր որոշումին մէջ, ու
իրենները՝ խելքին եկած համարելով՝ ա՛լ զրեթէ յուսա-
հատեր էին իրմէ:

* * *

Հիմա, ամիսէ մը ի վեր, հոգ կուզայ Սայքօ, ամէն
իրիկուն, իր ցաւը գրկած, գեղին ճնշող մթնոլորտէն ու
իրեններուն նեղացուցիչ միւթարանքներէն պահ մը հե-
ռանալու, թեթեւալու պէտքէն մղուած, ու քիչ մըն ալ
կարծես վտանգաւոր փորձութենէ մը քաշուած տարուած
դէպի գետը:

Քիւրտ պէլին վրանէն դառնալէն ի վեր, չեմ գիտեր
ի՛նչ յոգնած ու խռովիչ բան մը ունի Սայքօին գեղեցկու-
թիւնը: Տարօրինակ տեղունութիւն մը փեթուած է իր
կայտառ դէմքին վարդերը:

Սայքօ այս իրիկուն սովորականէն աւելի դժխեմ կը
թուի ըլլալ ու սարսուզին: Հրաւառ աչքերը հորիզոնին
անկած՝ լայն ու տենդոտ շարժումներ կ'ընէ երբեմն, կար-
ծես միջոցին մէջ աներևոյթ էակի մը կարկառելով:

Բայց յանկարծ, Սայքօ զայրոյթի ու յուսահատու-
թեան ճիչ մը կ'արձակէ.

— Ա՛խ, շա՛ն որդի... ա՛խ...:

Ու բռնեցքի կատաղի հարուած մը կը սպաննայ
իր փսրին վրայ:

Ա՛ն է... Քիւրտ Հասանին գտաւոր... բռնի բնակիչը
Սայքօի որովայնին որ իր դմնդակ դոյութիւնը կը գուժէ
ողբալի ու անողոք խլրտումներով:

— Ա՛խ, շա՛ն որդի... շա՛ն որդի, կը հեծկտայ Սայ-
քօ, ու խելայեղ՝ իր ակամայ մայրութեան հրէշային բան-

տէն ազատելու ունայն գահալիծուծովը կը սկսի վազել գետին եզերքն ի վար...

* * *

Սայքօին յղութիւնը գեղին մէջ իմացուեցաւ: Ա՛լ անհանդուրժելի գայթակղութիւն մըն էր ասիկա: Պէտք էր Սայքօն ամուսնացնել անպատճառ: Մի.ս լլիւած հարսերուն վաղահաս երկունքը ոչ մէկուն գաղտնիք մըն էր, բայց անոնց պիղծ մայրութիւնը նուիրագործուած էր ա՛լ եկեղեցիին սրբազան միջնորդութեամբը, ու այդ գեղջուկ ջերմեռանդներուն համար՝ ցեղին արիւնը թունաւորող անհարազատ սերունդի մը քստմեղի պատուաստը ահաբեկիչ բան մը չունէր բնաւ: Ու անոնք չհասկցան Սայքօին ցաւազին անկարողութիւնը մաքուր համարյոք մը կըրիւու երբ անոր էութեան խորը կառչած, անոր արիւնը խմելով կը զինովնար, կը շարունակուէր ֆիւրտին նախատինքը:

Ու ամէն միջոց դորձածեցին Սայքօն համոզելու հարաւ: Ռէսին բարեմիտ տղան կը հաւանէր իրը նկատելու Հասանին փիձը:

Կամաց կամաց, անուշ, ողորիչ խօսքերուն ընդունցքի վայրագ հարուածներ յաջորդեցին Սայքօի ընդունու կտորձքին վրայ: Բայց ան անվիանդ կը յամառէր տակաւին, իր նախատուած միտին մէջ ըմբռնացած, ու իրեններուն կամքին համակերպելու անկարողութենէն նահատակուած:

Ան ատեն, գեղին տէրտէրը ժամ տարաւ Սայքօն, գիշեր մը, ու խորանին առջեւ պլպլացող գեղին կանթեղին տակ, հանդիսատար ու խոպոտ ձայնով մը ըսաւ անոր՝

—Սայքօ՛, աղջիկս, գիտցած ըլլաս որ դժոխք պիտի երթաս, էրի՛ս մրկի՛ս ամբողջ կեանքը, եթէ չկարգուած զաւակ բերես...

Սայքօ՛ սարսափած իր գործելիք մեղքին ահագնութենէն՝ հաւանութեան խօսք տուաւ տէրտէրին որ յաջորդօրն իսկ պսակեց զայն ուսին տղուն հետ:

* * *

Չմեղը շատոնց անցեր, գարունն էր հիմա: Դաշտերը ու ծմակները ծաղկեր, ծածկուեր էին խալ, կենսայեղց բուսականութեամբ մը: Շրջակայ պուրակներուն հրճուանքէն դարձող թռչունները իրարու խելք կը թըռցնէին իրենց երգերուն տարփական մոլեգնութիւնովը: Բարի, մայրական գետը լախցեր, աներ էր նորէն ու խայտալէն, օրորուելէն կեանք կը բաշխէր հայրենի հողին:

Գիղը, խնդումներս՝ մթնալորտին պայծառութեանը մէջ, իր հին օրերու երջանիկ ու թոյլ խաղաղութիւնը կ'ապրէր երեքտկալով, որոճալով ու փառք տալով Աստուծոյ: Հեռուն, լեռներէն ու հորիզոնէն անդին միւս հայ պիղերէն ու քաղաքներէն անպարար բարձրացող

քանդումի ու խողխողման դժոխային աղմուկը մինչեւ հոյզէր հասներ...

Դեռ տարի մը չէր անցած քիւրտ Հասանին չարաշուք անցքն ի վեր, եւ արդէն գեղին մէջ ա՛լ չէին խորհեր անոր, ու ցեղին արիւնին եղած գծնդակ նախատինքը բաւորովին մոռցուած ըլլալ կը թուէր: Դարաւոր, մշտատեւ ստրկացումի մէջ ծնած, լոսած, համակերպած այդ էակներուն համար խոռոջն ու ըմբոստացումը—նոյն իսկ ունայն ու անկարող—չկասկածուած, անյղանալի զգացումներ էին: Ու ֆիւրտերէն մայրացած նոր հարսերը էրիկներուն կ'երկնցնէին ժպտուն՝ իրենց երախ սնեքը, որպէս զի համբուրեն զանոնք հոգեւին գուրչուրանքներով: Սայքօ՛ն... չէ՛, անիկա չէր մոռցած:

Ռէսին տղուն հետ ամուսնանալէն ի վեր բան մը չէր փոխուած անոր փոթորկած հոգիին մէջ: Իր անպատուած արիւնին վրէժը չէր զարթած հոն որոտալէ միշտ աւելի բուռն, միշտ աւելի տարամերժ:

Եր՛ար ու տաժանելի յղութիւն մը եղաւ Սայքօինը: Անիկա գետեզերքը կը թափառէր շատ անգամ, մաշերը հովերէն ալետանջ, խօլոր ու խելացնոր, ինքզինքէն փախչելու, հեռանալու անկարելի փափաքներով:

Հակառակ իրեններուն սրտցաւ փութկոտութեան ղինքը հանկարտեցնելու ու իրեն մոռցնել տալու աղէտքին հալածող յիշատակը, անիկա չէր կրնար հաշտուիլ իր անհարազատ մայրութեան ջախջախող գաղափարին հետ:

Իրեն անանկ կուգար ա՛լ որ հետապնդող ու արիւնկըզակ ճակատագրականութեան մը կոյր քմայքովը՝ մանջ մը պիտի ըլլար իր ծնածը, ու Սայքօ ինքզինքը կ'ուտէ մըտածումէն թէ՛ իր փորէն անցած, իր արիւնովն ու կաթովը անձամ այդ ֆիւրտին կտորը, օր մը հայ աղջկան մը ձեռքէն բռնելով՝ սուրբ խորանին առջեւ պիտի ելլար ու ժամուն հաճութիւնովն ու տէրպապային օրհնանքովը պիտի պղծէր զանիկա ու պիտի յաւերժացնէր Հասանին Ոճիրը Հայուն արգանդին մէջ:

Չէ՛, անհնարին մայրութիւն մըն էր ասիկա որուն անարգ հակադրումին գէժ իր վայրի, մաքուր ու անընտել հողին կը ծառանար, դաժան ու սպառնալից:

Ու ահաւոր օրը կը մօտենար:

* * *

Փոթորիկը գիւղին վրայ իր մուլեգնութիւնը կը թութուէր: Այսահար հով մը անտառին ծառերը կը գալարէր, իր վիթխարի անձկութիւնը ոռնալով անոնց շուարումին մէջ: Լեռնակուտակ, թխպոտ ամպեր, երկինքին վրայ հալածական, անձանօթ ու հիւրընկալ հորիզոններ կ'աքսորուէին: Գետը, իր հանդարտ վազքին մէջ յանկարծակիի եկած, կը փրփրար ու կ'ալիկոծէր:

Կին մը միւս մինակ ծանր ու զժուար քայլերով կը յառաջանայ գետեզերքին վրայ:

Սայքօն է որ ղեփ գեղին ու ուժասպառ, տղաբերքի ցաւերէն բռնուած, գուրս վազած էր տունէն ու հոս կը

քաշկոտուէրն Հիմա, իր գաղանի ու դաժան ճորոշումին մէջ պրկուած:

Անոր աչքերը կը մթննան կամաց կամաց, ու դերս գոյն ճիզի մը մէջ խորտակուած, ա'լ անկարող քաշելու կ'իյնայ, կը տախտապարի հոտ, հողին վրայ:

Վերջին սպառող դալարութեան են, ու Սայջօ կը զգայ իր արգանդին զարշանքէ լայնուալն ու բացուիլը ու անկից Քիւրտին զուրս խուժելը:

Ազատուած ու թեթևացած իր ինը ամիս սնուցած Նախատինքին բեռնէ, Սայջօ աչքերը զոցեց տեսած չըլլալու համար զայն, ու տաժանագինօրէն կանգնելով, իր արիւնին մէջ լողացող միսի կտորը փնտոնեց ոտքին ծայրովը, ու միշտ աչքերը զոց, ամբողջ ցեղի մը արիւնին վրէժովը սարսուզին՝ կատաղօրէն, խելայեղօրէն, վայրագօրէն կոխկոտեց զայն, ու իր առջև լճացած արիւնի ու սիզմի քոտմեղի զանգուածին վրայ մոլեգնօրէն գոռաց՝

— Սատկէ՛, սատկէ՛, շա՛ն գաւակ . . .

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

Վ Ր Է Ժ Ը

(Շարունակուէրէն և վերջ)

Է.

— Վտանգը անցուցինք, զոչեց Գարեգին Ավրամը բարեկալով, ա'լ Աթենքի մէջ սպահով կրնանք ըլլալ . . . գոնէ մինչև վաղն առտու:

— Անա՛նկ կը կարծես. ես, ընդհակառակը, կը մտածեմ որ մինչև վերջին վայրկեանը շատ զոյշ ըլլալու ենք, մինչև որ ինքզինքս զուրս նետեմ աս անիծեալ երկրէն: Սա միջոցիս անշուշտ ամէն բան երևան ելած է Բիրէի մէջ: Հայերը շոգենաւ գացած են, իս հոն չեն տեսած, հասկցած են որ մեկնած չեմ, ասդին անդին փնտառուքի ինկած են ու գուցէ հետքս ալ գտած . . .

— Կրնայ ըլլալ, բայց չեմ կարծեր: Էս կ'ենթադրեմ որ անոնք Խըտիվիէ շոգենաւը գացած են ու երբ տեսած են որ մէջը չէք, ենթադրած են թէ ուստական շոգենաւով մեկնած ըլլալու էք, որ միւսէն ժամ մը առաջ ճամբայ կ'իջլէ:

— Իցի՛ւ թէ ըսածիդ պէս ըլլար:

— Ինչ որ ալ ըլլայ, մենք նորէն ամէն զուշուութիւն ձեռք կ'առնենք: Հոս առանձին տեղ մըն է, մինչև դիշեր կը մնանք, կերակուրնիս ալ հոս կ'ուտենք, յետոյ, մուլը կոխելէն հտըը, կ'երթանք ձեր վարձած տունը և առտուն կանուխ կառքով մը կուգամ ձեզ կ'առնեմ ու կայարան կը տանիմ:

Գարեգինին այս կարգադրութիւնը ապահովագոյն մի-

ջօցը երկցաւ Հրեային և որոշեցին այնպէս ընել: Մինչև ժամը եօթը հոն նստեցան, յետոյ ընթրեցին, և ժամը ութնուկէսին ատենը, երբ արդէն բոլորովին մութցած էր, ճամբայ ելան:

Ավրամին վարձած տունը հաշիւ քսան վայրկեան կը տեւէր գարեջրատունէն: Իրենց անցնելիք փողոցները գրեթէ ամայի էին և վախ չի կար որ և է կասկածելի հանգիստով: Միայն Ամէլիայի ծառուղին լեցուած էր բազմութեամբ մը որ եկած էր քիչ մը զիշերային: Չ'ուզէր չընչել, ցերեկուան հեղձուցիչ տաքէն ետքը, և կամ ծառուղիին երկայնքը գտնուող երգեցիկ սրճարաններուն և բացօթեայ թատրոններուն մէջ ժամանակ անցընել: Պատանին ու Հրեան, որոնք զեպի Աքրօքսիս ուղղուելու համար ստիպուած էին ծառուղիէն անցնիլ, գրեթէ վազելով կտրեցին զայն: Իրենց այդ շտապելի անցքը, որ աւելի փախուստի մը ձեռ ունէր ու բոլորովին կը հակապատկերէր բազմութեան թող ու հանդարտ գնացքին, պատճառ եղաւ իրենց վրայ հրաւիրելու պտտօղնբու մէկ մասին ուշադրութիւնը:

Գարեգին նշմարեց ատիկա և ըսաւ Հրեային.

— Աւելի կամաց քաշենք . . .

Ինչ որ չկրցաւ նշմարել այն էր թէ բազմութեան մէջէն մէկը յանկարծ գատուելով, սկսաւ հեռուէն հետեւիլ իրենց և հետեւին զալ այն կողմնակի փողոցը ուր մտած էին:

— Վերջապէս հասանք, ըսաւ Սամաթիացի պատանին, տան մը դրան առջև կանգ առնելով ու ձեռքը բռնած բանալին կղպանքին մէջ խօթելով:

Հրեան ներս մտաւ Գարեգինին հետ: Տունը օրերէ ի վեր փակուած, տաք ու զարշահոտ մթնոլորտով մը լեցած էր:

— Քանի մը պատուհան բանանք ու օդը փոխենք, եղաւ երկուքնուն ալ մտածուածը:

Պատանին մտաւ փողոցին վրայ գտնուած սենեակը եւ գունդ ու պատուհանը բաց ձգելով, եկաւ Հրեային մօտ որ պարտէլին կողմի սենեակը մտած էր:

— Ա'լ կը հաւատամ կոր որ վտանգը անցուցի, զոչեց Ավրամ, գոհ և վստահ ձայնով մը, թիկնաթոռի մը մէջ տեղաւորուելով: Հիմակ, միւսի Խըխաթօ, վերջին ծառայութիւն մը նշտի խնդրեմ քենէ: Քանի որ վաղն առտու կանուխ պիտի գաս ինձի առնելու, աւելի աղէկ չ'ըլլար որ հոս մնաս: Վերը երկուքնուս համար ալ պառկելու տեղ կայ . . .

— Կ'ըլլայ, այնպէս կ'ընենք, պատասխանեց Գարեգինը զրգուած ձայնով մը:

Տուն մտած ատենէն պատանին իր հանդարտութիւնն ու պաղարիւնութիւնը կորսնցուցած էր. տարօրինակ ու յանկարծակի յուզում մը եկած էր վրան որ վայրկեանէ վայրկեան կ'աւելնար: Ավրամը սպաննելու գաղտնիքը զրգուածեան մէկ միջոցին ծագած էր Գարեգինի մտքին մէջ, երբ Արշակի բրոջ նամակին ազդեցութեան տակ յանկարծ տեսած էր Հրեան որ Պոլսէն եկող շոգենաւէն

գուրս կ'նկէր: Իր խորհուրդին գործադրութեանը վրայ երբեք կատարեալ պաշարիւնով մտածելու ժամանակ չէր ունեցած կամ մանաւանդ չէր ուզած մտածել: Կարծես անձանթ ու խորհրդաւոր գրգուռի մը ազդեցութեան տակ գործած էր, առանց իր բրածին և ընկելիքն որոշ դիտակցութիւնը ունենալու: Արշակին ընդդիմութիւնը մանաւանդ և իրեն դէմ հանած դժուարութիւնները պատճառ եղեր էին զինքը աւելի կուրորէն առաջ մղելու իր ճամբուն մէջ: Հիմակ որ գերտգոյն րոպէն հասած էր, հիմակ որ վերջապէս իր կարգադրած ու փափաքած կերպովը ամէն դժուարութիւն հարթուեր էր ու Հրեան ձեռքին մէջն էր, Գարեգին կը սկսէր շփոթիլ ու վարանիլ իր ընկելիք գործին ահռելիութեանը զիմաց:

Առանձին սենեակին մէջ, առանց անմիջական զբոսի մը, պաշարիւնով ելլել այդ ծերունիին վրայ յարձակիլ և սպաննել, տարօրինակ, սոսկալի բան մը կ'երեւար Գարեգինի աչքին:

— Չէ՛, պիտի չկրնամ ընել, կը մտածէր ինքնիրեն:

Ու կը ջանար, քաջալերուելու համար, մտքին առջեւ պատկերացնել Ալրամին ոճիրը ջարդին ատեն և ցած ու զարշելի ընթացքը Արշակի մօրն ու քրոջը նկատմամբ:

Հրեան որ ա՛լ գրեթէ կատարելապէս ապահովուած, թիկնաթոռին մէջ երկնցած կը ծխէր, նշմարեց իր պատանի բարեկամին խոռով ու տենդոտ վրիճակը:

— Ի՞նչ ունիս, անհանդիստ ես, հարցուց, չես խօսիր ու տխուր կ'երեւաս կ'որ:

— Այո՛, ըսաւ Գարեգին, քիչ մը ստամոքսս անհանդիստ է:

— Մեր կերած ձուկէն ըլլալու է, շարունակեց Ալրամ, շատ թարմ չէր ու ես ալ չկրցայ լաւ մարտել:

— Կարելի է:

— Արդեօք չե՞ս կրնար սա մօտերէն շիշ մը քոնեաք ասնել. միտին կը խմենք:

— Շատ աղէկ կ'ըլլայ, գոչեց Գարեգին ուրախութեամբ, որ դուրս ելլալու և քիչ մը առանձին մնալու պէտք կը զգար:

Ու գլխարկը դնելով դուրս ելաւ:

Ալրամ սիկարէթը մարեց ու բացաւ պզտիկ պայուսակը գոր հետը առած էր և որ կը պարունակէր իր դրամն ու զանազան զոհարեղէններ: Ոսկիներու շարքերը քննեց, յետոյ գրպանին դրամը հաշուեց ու պզտիկ տետրակ մը բացաւ որպէս զի օրուան ծախքերը նշանակէ:

Հագիւ տող մը գրած էր երբ յանկարծ սենեակին դուռը բացուեցաւ:

Արշակ երեցաւ սեմին վրայ:

Գիտենք որ առտուն, Օմոնիայի կայարանին դուրսը, Արշակ եւ Գարեգին իրարմէ բաժնուած ատեն, մամադիր եղած էին Բլաթիա թէոտորա, ցորեկուան ճաշը միասին ընելու համար: Արշակ գացած էր կէսօրին իր բարեկամը գտնելու, բայց ինչպէս ընթացողները գիտեն, Գարեգին հոն չէր: Հարցուցած փնտռած էր հրապարակին սրճարանները գտնուող Հայերուն եւ ամենքն ալ պատասխանած էին թէ չէին տեսած զայն: Կասկածը մտած էր Արշակի միտքը:

տասխանած էին թէ չէին տեսած զայն: Կասկածը մտած էր Արշակի միտքը:

Արդեօք նորէն իր խենթ խորհրդին ետեւէ՞ն գնաց, մտածեր էր:

Աճապարանքով ճաշ մը ընելէ ետքը անմիջապէս շոգեկառք նստեր ու Բիրէ գացեր էր, ահռելի մտատանջութեան մը մատնուած:

Արշակ կ'ենթադրէր որ իր բարեկամը գուցէ ինքզինքը չկրնայով զսպել և տեսնելով որ որսը ձեռքէն կը փախչի, նոյնիսկ Բարթէնոնի պանդոկին մէջ, կամ շոգեհաւը, փորձած էր գործադրել իր եղեանական խորհուրդը:

Մտատարոփ գիմեց պանդոկ և գրեթէ դողալով հարցուց զոնապանին թէ Ալրամ հո՞ն էր: Պատասխանեցին որ կէս ժամէ ի վեր մեկնած էր ու այդ միջոցին Խըալի վիէի շոգեհաւը ըլլալու էր, որ կը պատրաստուէր մեկնելու:

— Մի՞նա՞կ թէ պարոն Խրիսթօյին հետ մեկնեցաւ հոսկէ, հարցուց Արշակ որուն մտատանջութիւնը կամաց կամաց կը փարատէր:

— Պարոն Խրիսթօն թէև հոս էր մինչև մեկնած վայրկեանին, բայց միտին դուրս չելան: Ալրամ առանձին կառք մտաւ եւ մեկնեցաւ:

Մտային երկրորդ պատասխանը նորէն Արշակի երկրորդն էր արծարծեց: Անմիջապէս նաւակ մը նետուեցաւ ու շոգեհաւ գնաց:

Բոլորովին անհիմն չեն եղեր կասկածներս, կը մտածէր, Գարեգին զարձեր է Հրեային քով... կ'երեւայ որ պանդոկին մէջ չէ համարձակած բան մը ընելու եւ շոգեհաւ գացած է: Արդեօք մինչև Եզիպտոս ետեւէ՞ն պիտի երթայ...:

Շոգեհաւին մէջ ո՛չ Ալրամ կար ո՛չ Գարեգին: Արշակ քարափը վերադարձաւ բոլորովին տակնուվրայ եղած:

Գարեգին նորէն իր ճանկը ձգած է Հրեան, կ'ըսէր ինքնիրեն, բայց ի՞նչպէս... Արդեօք համոզեց ու Աթէնքի տո՞ւնը տարաւ զայն:

Կրկին վերադարձաւ Աթէնք: Գիտէր որ Հրեային վարձած տունը Աքրոբոլիսի մօտերն էր, բայց որոշապէս չէր գիտեր տեղը: Մտածեց Ամէլիայի ծառուղիին վրայ սրճարան մը նստիլ եւ սպասել, խորհելով թէ կրնար ըլլալ որ երկուքէն մէկը տեսնէր այդ կողմերը: Իր ենթադրութիւնը իրագործուեցաւ, միայն թէ քանի մը ժամ ըստ պատեղէ ետքը: Իրիկունը, երբ Ալրամ ու Գարեգին գարեջրատունէն աճապարանքով տուն կ'երթային, Արշակ նշմարեց զիրենք և հետեւեցաւ անոնց:

Հաստատապէս մտադրած էր ամէն բան ընել Հրեան աղատելու համար իրեն սպառնացող վտանգէն:

— Ասով թէ՛ Գարեգինը փրկած կ'ըլլամ և թէ՛ զինքը, կը մտածէր, ու կերպով մը վրէժս ալ լուծած իրմէ... ու աղէկ կերպով լուծած:

Իր խորհուրդը ա՛յնչափ զեղեցիկ կ'երեւար աչքին որ կը սկսէր խանդավառուիլ անով:

Երբ Ալրամ ու Գարեգին տունը մտան, Արշակ մօ-

տեցաւ զրան: Կ'ուզէր անմիջապէս դուռը զարնել, ներս մտնել ու իր ազատարարի դերը կատարել:

Նոյն միջոցին լսեց որ փողոցի վրայի սենեակին պատուհանը կը բանան:

Չեղբը զրան զանգակին վրայ, պահ մը սպասեց:

Պատուհանը բաւական ցած էր սենեակին մէջ անցած դարձածը տեսնելու համար: Արշակ ձգեց զանգակը և եկաւ կամացուկ մը դիտելու ներսը: Սենեակը մութ էր ու մէջը մարդ չի կար:

— Կ'երեւայ որ օդը փոխելու համար միայն բացին պատուհանը եւ իրենք ուրիշ սենեակ մը գացին, մտածեց:

Մէկէն խորհուրդ յղացաւ, փոխանակ դուռը զարնելու, պատուհանէն ներս մտնել ու սենեակին մէջ պահուրտիլ:

— Թերևս, կ'ըսէր, Գարեգին բան մը ընելու միտք չունի, ուրեմն ինչո՞ւ պարագայ տեղը իրար անցընեմ ամէն բան. սենեակին մէջ կը սպասեմ և որ և է կասկածելի աղմուկ մը կամ աղաղակ մը լսած ատենս մէջտեղ կ'ելլեմ:

Ու մտաւ պատուհանէն ներս:

Ականջ զրաւ ու րբ եւ է ձայն չլսեց. քաջալիրեալ մինչեւ դուռը առաջացաւ ու տեսաւ որ դիմացի սենեակին մէջ լոյս կար: Քիչ մը յետոյ լսեց Հրեային ու Գարեգինին խօսակցութիւնը, յետոյ տեսաւ Գարեգինը որ դուրս կ'ելլէր:

— Հիմա որ Ավրամ առանձին է երթամ ու պաշտօնս կատարեմ, որոշեց, շատ աւելի աղէկ է որ Գարեգինի բացակայութեանը գործը լիննայ:

Ոտքին ծայրերուն վրայ քաշիլով, կամաց կամաց մօտեցաւ սենեակին դրան:

— Ի՞նչ պիտի ընէ հիմա Ավրամ, երբոր մէկէն ի մէկ զիս տեսնայ. գուցէ դող ելլայ ու սկսի պողալ կանչել: Ս,նմիջապէս հասկցնելու եմ իրեն ինչո՞ւ գալս: Ներս մտնելուս պէս կ'ըսեմ իրեն. «Մի՛ վախնար, քեզ աղատելու եկայ:»

Ու Արշակ սենեակին դուռը բացաւ:

Ը.

Արշակի կասկածանքը Հրեային ընթացքին նկատմամբ կատարելապէս ճիշդ էր: Ս,վրամ հազիւ թէ զրա բացուիլը լսեց ու Արշակը տեսաւ, ահռելի ճիշ մը արձակեց ու ոտք ելաւ:

— Մի՛ վախնար, քեզ աղատելու եկայ, մի՛ պողալ այդպէս, գոչեց Արշակ շուարած:

Բայց հազիւ թէ վերջին բռնորը արտասանած էր, Ս,վրամ սենեակին անկիւնը դրուած խոշոր գաւազանը առնելով, իր վրայ կը դիմէր սպառնալից:

— Կեցի՛ր, ի՞նչ կ'ընես, պողաց Արշակ, աջ ձեռքով գաւազանը Հրեային ձեռքէն խլել փորձելով:

Սակայն Ս,վրամ անձնապաշտպանութեան բնազդէն յուզած, ուժով բռնած էր իր միակ զէնքը եւ զօրաւոր հար-

ուած մը իջաւ Ս,րշակի ուսին:

Ս,րշակ ցաւին ազդեցութեան տակ ճիշ մը արձակեց ու ահա՛ երկրորդ հարուած մը կերաւ զլիւին: Ս,յն ատեն՝ ինքնիրմէն ելած՝ կատաղօրէն խուժեց Հրեային վրայ ու երկու ձեռքով կոկորդը սկսաւ սխմել: Ծերունին, հակառակ իր տարիքին, բաւական հուժկու էր եւ շարունակեց գաւազանովը ձեռքը Ս,րշակին կոնակը, միևնոյն ատեն խեղդուկ հոնդիւններ արձակելով:

— Քեզ փաս տալու չեկայ, հանգարտէ՛, կը գոչէր ի զուր Ս,րշակ:

Երիտասարդը կը զղջար հիմակ իր յանկարծական երևումին համար, բայց ա՛լ օգուտ չունէր. Հրեան խօսք չէր հասկնար ու կը շարունակէր իր կատաղի յուսահատ մաքառումը:

Եթէ թող տամ, իս ալ պիտի մեռցնէ, մտածեց Ս,րշակ և սկսաւ աւելի ուժով սխմել իր ոստին կոկորդը:

Գրկնդխան կոկիւն մէջ եկան երկուքն ալ զարնուիլ փոքրիկ սեղանին որուն վրայ դրուած էր լամպարը: Սեղանը տապալեցաւ եւ երկու հակառակորդները մութը մնացին: Ս,վրամ կը շարունակէր իր գաւազանի հարուածները սակայն հետզհետէ նուազ զօրաւոր կ'իջնէին: Իսկ Ս,րշակ երկու բութամատը Հրեային խոչափողին յենած միշտ կը սխմէր կոկորդը սարսափելի ուժով մը որուն գիտակցութիւնը չունէր ինք:

— Սա գաւազանդ ձգէ, սրպէս զի ես ալ վիզդ չսխմեմ, կ'ըսէր ատեն ատեն:

Յանկարծ հարուածները գաղթեցան ու գաւազանը գետին ինկաւ:

— Հա՛, հիմակ խելքդ զուխդ եկաւ, գոչեց Ս,րշակ ու թող տուաւ Հրեային կոկորդը:

Հազիւ թէ երիտասարդը ձեռքերը քաշած էր, Ս,վրամ գետին ինկաւ:

— Կարծեմ թէ մարեցաւ, ըսաւ ինքնիրեն Ս,րշակ եւ սկսաւ մութին մէջ խարխալելով լուցկիի տուփը փնտնել լամպարը վառելու համար:

Երբ սենեակը լուսաւորուեցաւ, Ս,րշակ սոսկումով տեսաւ որ Հրեան գետին փռուած էր անշարժ:

Ս,նմիջապէս խոհանոց վազեց և ամանով մը շուր բերաւ երեսին սրսկելու համար, սակայն Հրեան կենդանութեան նշան մը չէր ի տար:

— Ս,րգե՞ծ մեռաւ, հարցուց Ս,րշակ ինքնիրեն, սոսկումով Հրեային ղէմքը զննելով:

Իրա՛ւ Ս,վրամ խեղդամահ մեռած էր...:

Ս,րշակ թիկնաթոռին վրայ ինկաւ, աչքերը անթարթ սեւեռած դիակին վրայ:

Նոյն միջոցին լսեց որ տանը դուռը կը բանային: Գարեգին էր որ քոնեքառի շիշը առած կը վերադառնար:

Երբ պատանին սենեակէն ներս մտաւ, ապուշ մնաց իր առջեւ պարզուող տեսարանին դիմաց: Գլուխը մէյմը դիակին մէյ մը Ս,րշակին կը դարձնէր առանց բառ մը արտասանելու:

Յետոյ մէկէն գոչեց. — «Մեռցուցի՛ր հէ՛ ... կեցցե՛ս:»

ու գնաց համբուրել իր բարեկամը:

— Հիմա պատմէ՛ նայինք ի՞նչպէս հոս եկար ու ի՞նչպէս սատկեցուցիր այս շունը, շարունակեց Գարեգին՝ ձեռքովը գետին փռուած զիակը ցոյց տալով:

Արշակ գետ իր յուզումէն դողահար չպատասխանեց պատանիին հարցումներուն: Գարեգին բռնեաքի շիշը բացաւ, քանի մը ուժով խմեց, և Արշակին երկնցուց:

— Խո՛ւմէ՛ քիչ մը որ յուզումդ անցնի, ըսաւ:

Արշակ մեքենաբար առաւ շիշը ու բերանը տտրաւ: Պատանիին ներկայութիւնը և ըմպելիքը կամաց կամաց փարատեցին իր յուզումը և քանի մը բառով պատմեց այն անցքերը որոնք ընթերցողները գիտեն արդէն:

— Հիմա սա զիակը մէջտեղէն վերցնենք ու երթանք, ըսաւ Սամաթիացին, երբ Արշակ իր պատմութիւնը աւարտեց:

— Ի՞նչպէս...

— Հոգ մի՛ ընեք, ամէն բան առաջուց մտածած եմ: Վարը, խոհանոցը, ջրամբար մը կայ, անոր մէջը կ'ինջեցընենք, կը լմննայ կ'երթայ:

Երկու բարեկամները առին զիակը ու սենեակէն դուրս ելան:

Քիչ մը ետքը վերադարձան, նորէն քանի մը ուժով բռնեաք խմեցին, Գարեգին սիկառէթ մը վառեց, ձեռք առաւ Ալրամին փոքրիկ պայուսակը, բացաւ և ըսաւ:

— Նայինք ի՞նչ կայ սա պայուսակին մէջ:

Մէկիկ մէկիկ դուրս հանեց թուղթի մէջ ծրարուած դրամները, յետոյ զոհարեղէնները:

Արշակ ճիշ մը արձակեց:

— Մօրս օղբերը...:

Երիտասարդը հետզհետէ ճանչցաւ իր ժօրն ու քրոջը պատկանող զոհարեղէնները: Գարեգին ամենքը յանձնեց Արշակին որ զրպանը տեղաւորեց զանոնք: Բայց կար մաս մը որ իրենց չէր վերաբերեր:

— Ասո՞նք ի՞նչ պիտի ընենք, հարցուց Գարեգին վարանոտ:

Երկու բարեկամները իրարու երես նայեցան:

— Պայուսակին մէջ գնենք ու նետենք զիակին քով, գոչեց պատանին, իսկ զրամը անշուշտ դուն պիտի առնես, քանի որ ձերն է:

Քառորդ մը ետքը երկուքը միասին դուրս կ'ելլէին տունէն, երբ արդէն ժամը տասներմէկին կը մօտննար:

Բաւական ժամանակ քաղցին առանց բառ մը փոխանակելու: Վերջապէս Գարեգին խզեց լուութիւնը:

— Ի՞նչ կ'ըսես աս մեր ըրածին:

— Կը կարծես որ մե՞նք ըրինք, պատասխանեց Արշակ:

Ե. Օ.

ԿԱՆԱՆՑ ՎԻՃԱԿԸ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՄէՋ

(Շարունակութիւն և վերջ)

Բ.

Ակներու է որ այդպիսի մեքենայութիւններու արդիւնք եղող ամուսնութիւնները, որոնց մէջ աղապատանքի իրական զգացում մը չի մտնել զրեթէ երբեք, չեն կրնար նոյն իսկ բաղդատական երջանկութիւն մը տալ անոնց զոհ եղող մանկամարդ տղջիկներուն: Ըստի դրագէտներուն գործերը լեցուն են մալլ ու սրտառուչ պատկերներովը այդ դժբաղդ կիներուն, որոնց յանկարծակի զարնուած երիտասարդութեան կը յաջորդեն տառապանքի երկար տարիներ եւ որոնք էրկանը տմարդութիւններուն մշտնջենական երկիւղին մէջ կ'ապրին, չհամարձակելով բառ մը արտասանել, հաղիւ համարձակելով մտածել: Երկուսնուհաղ է իր Նամուս վէպին մէջ, որուն համար իր տիպարները գաւառի կեանքէն առած է, կանացի դէմքեր ստեղծած է, ինչպէս Մարիամ Բաշի, Գիւլնուր եւ այլն, որոնք ամենքն ալ մեզի ցոյց կուտան երկչոտ, համակերպած կիներ, որ չի համարձակիր էրկանը խօսքին դէմ դալու, ոչ իսկ իր զաւակները պատշգամներու երբոր հայրը կը յանդիմանէ զանոնք կամ շատ ուժով կը ծեծէ, և որ առատ արցունք կը թափէ միայն՝ չարաչար զոհուած կեանքի մը վրայ: Այդ վէպին գլխաւոր դիւցազնուհին, դժբաղդ Սուսանը, բարի ու խորապէս պարկեշտ կին մը, մասնաւորապէս սրտառուչ է: Իր ծնողքը իրեն թող տուած չեն ամուսնանալ իր երկար տարիներէ ի վեր սիրած մարդուն հետ, եւ զինքը բռնի կարգած են կոշտ ու կոպիտ, կասկածոտ ու անզուլթ մարդու որ ճշմարիտ գերիի մը պէս կը վարուի անոր հետ, կը ծեծէ, եւ վերջ ի վերջոյ կը սպաննէ՝ անհիմն զրպարտութեան մը յառաջ բերած վարագ նախանձի կատաղութեան մէկ վայրկեանին: Նուսուրի հեղինակին վրայ քննական ուսումնասիրութեան մը մէջ Սուսանը խաւարին տիր սպիտութեան մէջ լոյսի ճառագայթ մը կը կոչեն:

Նոյն հեղինակին մէկ ուրիշ վէպին, Արսէն Դիմաքսեանի մէջ, կը տեսնուի թէ գլխաւոր հերոսին մայրը ինչպէս անցուցած է իր կեանքին լաւագոյն տարիները: Երբոր այդ հերոսը, երկարամեայ բացակայութենէ յետոյ հայրենի գիւղը դառնալուն, վերստին կը գտնէ իր մանկութեանը ականատես եղած վայրերը, կը խորհի այն ամէն տառապանքներուն զոր մայրը—մայրը որ այնքան կը սիրէր զինքը—կրած ըլլալու է, և թէ ի՞նչ եղած է այդ տարաբաղդ կնոջ կեանքը՝ դժման, բռնաւոր ու կուլարար մարդու մը հետ:

Երիտասարդ զրոյ Նար—Դիտ շատ ուժով և ճշդութեամբ պատմած է ընկերութեան ստորին դասակարգերուն հայ կիներուն ամուսնական տաժանելի կեանքը:

իր մէկ վէպին մէջ, կը ներկայացնէ ողբերգական կացու-
թիւնը զժբազգ կնոջ մը որուն զինով էրիւր զինետունը
կը ծախսէ ընտանիքին վերջին դրամը և՛ տուն դառնալուն՝
իր խեղճ կինը կը խոշտանգէ ու կը ծեծէ: Վէպին տեսա-
բաններէն մին կը ներկայացնէ այդ մարդը որ կը խորհի
թէ ո՛ւսկից կրնայ դրամ ձարել՝ նորէն երթալու խմելու
համար, որովհետեւ գրպանը մէկ փարա փնացած չէ: Այդ
միջոցին կը հասնի իր որդին, պզտիկ տղայ մը որ ուրախ
զուարթ կը պատմէ թէ մէկը իրեն քսան կոպէկ տուած է:
Հայրը խնդի պէս տղուն վրայ կը նետուի, գրամը կը
խլէ և նորէն զինետուն երթալ կ'ուզէ: Կինը կը փորձէ
կեցնել ավազինը, բայց ան կը հայհոյէ ու կը նախատէ
զինքը, հարուածներ տեղացնելով անոր նիհար մարմին
վրայ:

Այդ հեղինակին մէկ ուրիշ վիպակին մէջ նմանօրի-
նակ նիւթ մը կը գտնենք: Մարդ մը կինը կը խոշտանգէ,
անոր թող չի արար իրեն հետ սեղան նստիլ, ու միանգա-
մայն կը նախանձի բոլոր անոնցմէ որոնք այդ խեղճ ա-
րարածին կը մօտենան. բնաւ հոգ չի տանիր իր գաւակ-
ներուն, եւ զանոնք տեսնելուն պէս սուարգօրէն կը ծեծէ:
Օր մը իր խրճիթը դառնալուն, կը տեսնէ որ կինը բա-
ցակայ է և զրացնելուն գացած է. մուկին բարկութիւն
մը կը զգայ, եւ կը կարծէ թէ կինը զինքը կը խարէ: Կի-
նը դրան սեմին վրայ երկնալուն պէս, մարդը վրան կը
յարձակի բուռնցքի հարուածներով ու կը ծեծէ մինչեւ
որ գետին կ'իյնայ ան: «Անորէն, ի՞նչ կ'ուզես ինէ» կ'ըսէ
կինը հեծկտալով, և իր-դիեցիկ մանուկը կը կառչի իր
կուրծքին ու կուլայ, մինչդեռ քիչ մը անդին, անկիւն մը,
ուրիշ տղալ մը սարսափահար կը ճչէ: — «Գտազանով
մը պիտի ծեծկը բեղի, ո՞ր է գաւազանը:»

Գաւազան չգտնելով, մարդը կօշիկները կ'առնէ և կը-
նոջը վրայ կը նետէ: Վախէն խելայեղ, կինը զինով լե-
ցուն սափօր մը կ'առնէ զոր էրիկը տարիներէ ի վեր գան-
ձի մը պէս կը պահէ, և կտոր կտոր կտոր կ'ընէ զայն:
Մարդը ապշած կանգ կ'առնէ, բոլոր մարմնովը զողալով,
որպէս թէ զինքը գետին նետած ըլլային՝ փոխանակ անօ-
թին. յանկարծ, չար ցոլք մը կ'անցնի աչքերէն, ձեռքը
բռնած կօշիկը մէկդի կը թողու, և խոշոր քար մը առնե-
լով՝ կնկանը կը նետէ: Քարը զժբազգ էակին կանակին
կը հանդիպի. ահոնի ճիւղ մը կ'արձակէ ան, քանի մը
քայլ կ'առնէ, և գիրկը բռնած տղեկը ձգելով, մտած գե-
տին կ'իյնայ:

Հայ բանաստեղծներն ու վիպասանները ո՛չ միայն կա-
րեկցած են իրենց երկրին աղջիկներուն և կիններուն ող-
բալի վիճակին, այլ կանգ առած են սաստիկ տառապանք-
ներուն առջեւ զոր անոնք երկար դարեր կրած են իսլամ
տիրապետութեան ներքեւ, երբոր փաշայի մը կամ խանի
մը ուշադրութիւնը դրաւելու զժբազգութիւնը ունենալով՝
իրենց պատիւը կը կարսնցնէին յագեցնելու համար այդ
տէրերուն անպանութիւնը, իրենց երիտասարդութիւնը կը
թաղէին հարէմին անձուկ պատերուն մէջ եւ քրիստոնէ-
սութիւնը կ'ուրանային:

Պատկանեան, իր Բուրաստան քերթուածին մէջ,
իրեն նիւթ առած է ժողովրդական հէքեաթ մը ման-
կամարդ աղջիկներու վրայ որոնք, զուարթ խումբ մը
կազմած, մօտակայ գաշտ մը գացած էին հոն ժամանակ
անցնելու խաղալով ու խօսակցելով, և որոնք ամենքն
ալ սրամահ եղած են յայրատ Պ սրսիկներէ որոնք անոնց
պատիւը բռնաբարել կ'ուզէին, եւ խողխողեցին զանոնք՝
իրենց դիմադրելուն համար: Ժողովրդին քմայքը շա-
տփցած չէ այդ պարզ եղելութեամբ, և հէքե սթը կ'աւել-
ցնէ— ու Պատկանեան ատիկա պահած է իր քերթուա-
ծին մէջ— թէ հոն ուր այնքան մատաղ կեանքեր անհետ
եղան, հրաշալի ծաղիկներ բուսան անմիջապէս, վարդեր,
մանիշակներ ու շուշաններ:

Ուրիշ քերթուածի մը մէջ, Հաղարից միւր, Պատ-
կանեան կը նկարագրէ հոգեկան վիճակը մանկամարդ
աղջկան մը որ թիւրք փաշայի մը հարէմը բանտար-
կուած է: Պերճանքն ու ճոխութիւնը կը շրջապատեն զին-
քը. գեղեցիկ ու փարթամ հանգերձներ ունի, բոլոր փա-
փաքները նոյն հետայն կը կատարուին, իր տէրը հմայ-
ուած է իր գեղեցկութեամբը, բայց ան տխուր է՝ յիշելով
այն ժամանակը ուր անարատ էր, մտածելով հայրենի
տանը, խեղճ մօրը որ անշուշտ կուլայ դեռ իր վրայ: Մար-
սափով կը յիշէ այն օրը ուր առեանգեցին զինքը և հարէ-
մը բերին՝ հակառակ հօրը պաղատանքներուն, որ կեան-
քը վրայ տուաւ՝ զինքը ազատել փորձելուն համար: Բայց
իր հոգին այնքան մաքուր ու բարի է որ չ'ատեր իր թշնա-
միները. «Իր անմեղ շրթունքներէն անէճքի խօսքեր չ'թռան
բնաւ իր շար թշնամիներուն դէմ... բայց այդ ահոնի օ-
րէն ի վեր, իր գէմքին վրայ ո՛չ ծիծաղ տեսնուեցաւ ո՛չ
ժպիտ, ու միայն կիտաձայն կը կրկնէր սա տրտում խօս-
քերը. ինչո՞ւ, ինչո՞ւ ծնողքս չեն գար զիս ազատելու:»

Բաֆֆի իր գլխաւոր գործերուն մէջ և իր աշակերտը
երիտասարդ վիպասան Փափազեան յաճախ կը խօսին հայ
կանանց թիւրքերէ ու Քիւրտերէ կրած բռնաբարութեանց
մասին: Յիշենք օրինակի համար Բաֆֆիի Չալալիտուրի
մէկ հատուածը, ուր նկարագրուած է Քիւրտերու զիշերա-
յին զինարբուց մը, որոնք իրենց հրկիզած զիւղերէն բաշ-
մաթիւ Հայուհիներ առած հետերին բերած են:

«Մի կողմում թմբուկները և զուռնաները ածում էին,
մի կողմում պար էին բանել այն ձևով, որ մեզանում կոչ-
վում է եալլի, իսկ քրքերը կոչում են գոռնադ: Պարում
էին կանայք: Նրանք բազմաթիւ էին, և մինը միտի ձեռ-
քից բռնած, կազմել էին մի երկայն շարք, որ շղթայի
նման պարտովելով, ձևացնում էր մի մեծ բոլորակ: Բնա-
րակի մէջ տեղում ցցած էին երկայն ձողեր, որոնց զրուխ-
ների վրայ վառվում էին շահեր: Նալթի մէջ թաթա-
խած ցնցոտիքը բոցավառվում էին և իրանց ծիրանի շա-
ռաւիղներով լուսաւորում էին պարող կանանց զունաթափ,
ված երեսները: Չահերի մօտ, բոլորակի միջնավայրում,
նստած էին տղամարդիկ եւ դժոխային ոգեւորութեամբ
նայում էին կանանց մերկ շղթայակապի վրայ, որ անդա-
գար շրջում էր նրանց շուրջը: Երբեւում էր, որ այդ սղոր-

մելի արարածները ակամայ և ստիպմամբ յանձն էին առնել այդ խայտառակ պարահանդէսը: Այսօր, անպատուութիւնը նրանց այն տատիճան մոլեգնութեան մէջ էին ձգել, որ իրանց կատաղութիւնը խելագարութեան էր հասնում: Նրանց աչքերում վառվում էին բարկութեան բոցեր, շրթունքները դողդողում էին տենդային անհանգստութեամբ եւ գունամափ երեսների վրայ երևում էին սոսկալի ցնցումներ: Շատերը նրանցից այնքան թուլասիրտ էին, որ չէին դիմանում անտանելի ցաւին, և ուշաթափ լինելով, ցած էին գլորվում:— Իսկ այդ բոլորը, որ մարդկային խղճի վրա կարող էր ազդել գուժ, որ կարող էր ամէն մի սիրտ, որքան և քարացած լինէր նա, մեղմացնել և լցնել նրան առաքինական զգացմունքներով դէպի տկար և գեղեցիկ սեռը, — ընդհակառակն աւելի բորբոքում էր գերիշնորհի վայրենի կրքերը և աւելի զրգոում էր նրանց անտանական ոգեւորութիւնը: Պարզ շարունակվում էր իր բոլոր դժոխային խաղարկութեամբ: Մերկ կանանց շարքը անզգար պտըտվում էր թմբուկների եղանակով: Տղամարդիկ նրանց բոլորակի միջովայրում նշտտոտած, երգում էին, ծափահարում էին, գոռում էին եւ գոչում էին, եւ հերոսներից ամէն մէկը երբեմն իր թաշկինակը ձգում էր հաւանած կնոջ վրա, և իսկոյն սրտերի հակառակ մի գոյգը— մի հրեշտակ և մի դեւ— առանձնանում էր մերձակայ թփերի մէջ:»

Այս մէկ քանի օրինակները, զորոնք կրնայինք բազմապատկել, կը բաւեն ցոյց տալու թէ ի՞նչ է առհասարակ հայ կանանց տխուր վիճակը, որոնց կեանքը կրնայ երկու բառի մէջ ամփոփուիլ, — հնազանդութիւն և ստրկութիւն: Անշուշտ, վերջին տարիներու կանացի մեծ յառաջդիմութիւնը իր բարերար լոյսին մէկ ճառագայթը զրկած է արդէն այն թշուառ երկիրը, զոր միանգամայն կը ճրգմեն թէ՛ Ռուսիա և թէ՛ Թիւրքիա. բայց ժամանակակից զրոզներու գործերը մեզի ցոյց կուտան թէ դեռ ահագին բան կայ ընելիք: Չեմ գիտեր թէ Հայաստան պիտի պահէ իր անհատականութիւնը՝ իր վերջերս կրած այնքան խորին վերքերէն յետոյ, բայց պիտի չկրնայ քնուկէն (ոռուական խարազան) և հարկմէն ազատիլ՝ ցորչափ հայ կինը իբր ստրուկ նկատեն եւ իբր այն վարուին անոր հետ: Ազդ մը չի կրնար բարձրանալ, եթէ կնոջ չի տայ այն տեղը որուն իրաւունք ունի ան:

ԺԻԿԼԻՒՎ ՎԼԱՏԱ

ԲԱՑ Ն ԱՄԱԿ

Վիւենայի Մխիթարեան Եկեղեցւոյ Գրաստանէն

Կր ներքը որ ինձի պէս «ոչ-ուսումնական» մը ձեզի այդ նամակը զրելու ձանձրոյթը կ'առնէ: Կ'ապահովցնեմ ձեզ որ երբեք ապիկա պիտի չփորձէի, եթէ ա՛լ քիչ մը ձանձրացած այն «ուսումնականութեան» վկայագրէն զօր

զուք ձեզի կ'առատաձեռնէք՝ առանց ուրիշներու ամենազոյզն բաժին մը հանելու կամէութեան, գաղափարը ունեցած չըլլայի մաղէ անցընելու ձեր Հանրապետութեան զակութիւնը, ու եթէ չմղուէի այն գորգուրանքէն որ ունիմ հայ աշխարհին զարեքով նուիրագործուած անուններուն համար, որոնց հետ, ինչպէս պիտի տեսնենք, չըլլալիք սակ-ժեւով մը կը վարուիք զուք:

Հարկ չեմ տեսներ յիշեցնելու բացայայտ ու հանրաժանօթ ճշմարտութիւն մը թէ ձեր թերթը զրեթէ ամբողջապէս թարգմանութիւն է միշտ: Չեզմէ՛ աւելի կարևոր ու ինքնաստեղծ գործեր, աւելի անձնական խուզարկութիւններու արդիւնք՝ նոք լոյս բերող գործեր սպասելու պատճառ մը չունինք: Բայց յիմա՛ր բան մըն է արդեօք յուսալը որ գոնէ թարգմանութիւնները քիչ աւելի անսխալ ընէիք, ու քիչ մը աւելի ժամանակ նուիրէիք գերմաներէն լեզուին ուսմանը:

Բացէք ձեր զեկտեմբերի թիւը, էջ 362... «Դիտան փնտրելու ենք այսօրուան Սուպահանի մէջ որ Դիարբեկի հիւսիսային կողմը դէպի Հավրու տարածուող երկիր մըն է...»

Արդ կը հաճիմ ձեզի իմացնելու որ Սուպահան անուն երկիր չի կայ ան տեղուանքը. ծանօթ, շատ ծանօթ երկիր մը կայ, Մոփք անունով, զոր կը սիրեմ ենթադրել թէ մեր պատմիչներուն մէջ կարգացած ըլլալու էք: Եւ արդէն գերմանացի գիտնականը Մոփք ըսել կ'ուզէ եւ փորձած է ըսել իր արտասանութեանը ներածին չափ: Բայց զուք, աւելի Տեւոնն քան բոլոր Տեւոնները, Սուպահան ընելու չափ ծոճկած էք այդ հայկական անունը ձեռքնաղ թարգմանութեանը մէջ:

Նոյնպէս փնտրուարի թիւ, էջ 49... «Բեւը Երիտիան Վանայ ծովուն հիւսիսային կողմը գտնուող Ստեփան-Դաղը լեռան հաշտար կը դնէ...»

Այս հազուագիւտ, այս մարգարտէ ֆրագին մէջ, «Երիտիան ու Ստեփան-Դաղը իրարու հաւասար» ըսելով ի՞նչ կը հասկնաք. Երիտիայի ու Ստեփան-Դաղը լեռան բարձրութիւնն է հաւասարող, ինչպէս հարկաւորաբար պիտի ենթադրուէր վերի տողէն, կամ թէ գիտնալով ձեր «ուսումնական» ի հայերէնը, պէ՛տք է գուշակենք որ հաւասար ըսելով համապատասխան ըսել կ'ուզէք: Բայց այն ատեն, Աստուծոյ սիրուն, ուրկից գտեր էք Ստեփան-Դաղը: Վանայ ծովուն հիւսիսային կողմը լեռ մը կայ իրաւ, բայց անունը (ի՞նչ կրնանք ընել) Ստեփան չէ, այլ Սիփան, (Սիւպահան, այսինքն բարձր):

Մտքի ի՞նչ տարօրինակ վիճակ մըն է սրով ամէն տեղ ձեր քթին տակի Ս. Ստեփաննոսը կ'ուզէք կոր տեսնել:

Էջ մը զարձուցէք ուրիշ խոյժութեան մը հանդիպելու համար, որուն գոհ կ'երթայ հայ հոգիին շատ մտերիմ անուն մը, — Ուտան, Վանայ հարաւակողմը ծանօթ քաղաքը, զոր առանց վարանելու կրցած էք զրել

Վ ա ս տ ա ն :

Բայց ա՛լ չեմ ուզեր շարունակել: Միայն թէ, վերջացնելէ առաջ, իբր ջերմ փափաքող մը ձեր յառաջդիմու:

թեան՝ ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ իմ Արթօ բարեկամիս (աս ալ ոչ-ուսումնականներու խումբէն մէկը) պատուական ուսումնասիրութիւններուն վրայ որոնց առաջինը երեցաւ ասիէ առաջ Նոր-Կեանքի 99ի 22րդ թիւին մէջ, ուսումնասիրութիւններ որ ապահովաբար սխալ թարգմանութիւններ ընելէ տարբեր բան մըն են բոլորովին:

ԱՆՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻՈՅ ԶՈՐՍ ԿՈՂՄԸ

ՌՈՒՍԻԱ ԵՒ ԹԻՒՐԿԻԱ

Վերջին շաբաթներուն մէջ, քաղաքական աշխարհին էն կարևոր եղելութիւնն է—Թրանսվալի պատերազմին յաղթանակաւորութենէն զուրս — Ռուսիոյ յանկարծակի բռնած տիրական, պահանջկոտ ու անդրդուելի դիրքը Թիւրքիոյ հանդէպ:

Երկու են խնդիրները որոնց լուծումը կը պահանջէ Ռուսիա՝ առարկութիւն չընդունող խստութեամբ մը, երկուքն ալ մեզի համար կենսական կարևորութիւն ունեցող խնդիրներ. — հիւսիսային փոքր-Ասիոյ մէջ երկաթուղիներու շինութիւնը, և Կովկասի գաղթական Հայերուն վերադարձը:

ՌՈՒՍԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐ ՓՈՔՐ-ԱՍԻԱՅ ՄԷՋ

Ռուսիոյ այդ յանկարծական երևումը Թիւրքիոյ քաղաքականութեան առաջին կարգին վրայ, անոր համար աւելի զարմանք կը պատճառէ որ Ռուսիա շատոնց է որ կամովին ստուերին մէջ կը մնար, անձայն ու անշարժ: Թէ՛ դիւանագիտական և թէ՛ տնտեսական շրջանակները շատ սուր ուշադրութեամբ կը հետեւին Ռուսիոյ ջանքերուն՝ Ռուսիոյ սահմանակից օսմանեան նահանգներուն մէջ երկաթուղիի շինութեան իրաւունքը քացարձակապէս իրեն վերապահելու: Ասիկա իրօք սուլթանին իշխանութիւնը սահմանափակել եւ զայն գործնականապէս ոտնակոխ ընել ըսել է, ու հողային բռնաբարում կը նշանակէ, ինչպէս նաև առևտրական թեւարկութիւն մը այդ նահանգներուն վրայ: Բայց տարակոյս չկայ թէ Թիւրք կառավարութիւնը պիտի հարկադրուի համակերպիլ Ռուսիոյ պահանջումին:

Կ. Պոլսոյ ռուսական դեսպան Պ. Չինովիէվ փետրուար 23 ուրբաթ օր մէկուկէս ժամ այնպիսի տեսակցութիւն մը ունեցեր է սուլթանին հետ, որ Ապտիւ-Համիտ սահմակած մացեր է: Թայմգին խօսքով, Պ. Չինովիէվ ըսեր է թէ Թիւրքիա ոչ մէկ տեղէ մը յոյս սպասելու չէ, և թէ հասկնալու է որ օսմանեան կայսրութիւնը՝ ոտքը ձեռքը կապուած՝ Ռուսիոյ հրամանին տակն է: Ռուսիոյ հետագիւրներու նայելով, սուլթանը այդ տեսակցութեան միջոցին առաջարկեր է ինչ ինչ մասնաւոր գծերու համար նախապատուութեան իրաւունք մը տալ Ռու-

սիոյ, երբոր այդ գծերը շինուելու ըլլան: Պ. Չինովիէվ իր տժգոհութիւնը յայտնեց է այդ առաջարկութեան համար, յայտարարեց է թէ այդ գծերուն շինութեան մասին սուլթանին վերջերս տուած հատուտիքները անբաւական են, և շատ աւելի ընդարձակ ու վճռական առանձնաշընորհումներ պահանջեր է, մասնաւորապէս շէշտելով որ սուլթանը յանձն առնէ ուրիշ ո եւ է մրցակից բոլորովին մերժել: Սուլթանին խնդրանքին վրայ սակայն, դեռպայիտ Ապտիւ-Համիտի առաջարկութիւնը Բեղրպուրկ հաղորդեց է, և ռուս կառավարութեան պատասխանին պիտի սպասէ:

Հասկնալի է որ այսպիսի վարմունք մը սարսափեցուցած ու շուարեցուցած ըլլայ սուլթանը: Երկու օր յետոյ, հակառակ իր սովորութեանը որ է քարտուղարի մը միջոցաւ տեսնուիլ իր նախարարներուն հետ, երկար տեսակցութիւն մը ունեցեր է արտաքին գործերու նախարար Թէվֆիգ փաշայի հետ, և յաջորդ օրն ալ նախարարական արտասովոր ժողով մը տեղի ունեցեր է պալատը՝ Ռուսիոյ այդ պահանջումներուն առթիւ:

Կ'ըսուի թէ Թիւրքիոյ ընդհանուր սպայակոյտը յիշատակազիր մը ներկայացուցեր է սուլթանին՝ անոր ուշադրութիւնը հրատարակելով այն վտանգներուն վրայ որոնք Թիւրքիոյ զինուորական կացութեանը պիտի սպասնան՝ եթէ Ռուսիոյ պահանջումներուն զոհացում տրուի:

ՌՈՒՍԻԱՅ ՀԱՅԵԱՑԻՒՄ

Շահեկան է անշուշտ գիտնալ — որչափ որ կարելի է գիտնալ — Ռուսիոյ հայեացքը այս ծանրակշիռ հարցերուն մասին:

Բիւզէրի Կ. Պոլսոյ թղթակիցը Ռուսիոյ բռնած դիրքը կ'աշխատի բացատրել սա պէտ թէ «Ռուսիա այս միջոցին պատրաստ չէ զրամագլուխ յատկացնելու երկաթուղիներու շինութեան՝ օսմանեան կայսրութեան մէջ. բայց որպէս զի ուրիշ ազգեր չօգտուին իր անպատրաստութենէն և բոլորովին շտիրանան այդ կարգի ամէն ձեռնարկներու, կը փափաքի յատուկ բաժին մը վերապահել իրեն՝ սը ռուս զրամատէրները կարենան ի հարկին արտօնութիւններ ձեռք բերել: Փոքր-Ասիոյ հիւսիսային նահանգները այն ասպարէզն են որուն ռուս զրամատէրները բնականաբար ամէնէն աւելի ուշադրութիւն պիտի դարձնեն եթէ փափաքին երկաթուղի շինել Թիւրքիոյ մէջ: Գինիս—Պասրա երկաթուղիին գերման խմբակի մը տրուիլը տհաճելի անակնկալ մը եղաւ ռուս սեղանաւորական շրջանակներուն, թէպէտ անշուշտ ռուսական զեսպանատունը և կառավարութիւնը տեղեակ էին Գերմանիոյ կայսեր ըրած ջանքերուն՝ այդ արտօնութիւնը ձեռք բերելու ինչպէս Տէյն Պանքին, եւ անկարող գտնուեցան այդ ջանքերուն հակառակելու: Վախնալով որ մի գուցէ Գերմանացիները կառակելու վախնալով որ մի գուցէ Գերմանացիները այդպիսի փորձի մը առաջը առնելու համար, ռուսական զեսպանատունը այս պահանջումները կ'ընէ հիմա ուսուլթա-

նէն: Ծանօթ իրողութիւն մըն է թէ սուլթանը շատ հակառակ է տարտամ կամ ընդհանուր նկարագիր ունեցող յանձնառութիւններ կնքելու: Հետեւաբար, մեծ ճնշում բանեցնել հարկ պիտի ըլլայ՝ իրեն ընդունել տալու համար Ռուսիոյ պահանջած այլամերձ իրաւունքին սլըզբունը: Ռուսերը ոակայն մէկէ աւելի լծակ ունին ձեռուընին (հայ գաղթականներու վերադարձի խնդիր, պատերազմական տուգանքի խնդիր եւայլն), զորոնք զորձածելով՝ կարող պիտի ըլլան պէտք եղածին չափ ճընում բանեցնել:»

Անգլիական այս հայեցակէտէն յետոյ, տեսնենք բուն ռուսական տեսութիւն մը այս երկաթուղիներու հարցին վրայ —, զոր Պէրլինըր Թակէպլադի Բեդրպուրիի թղթակիցը քաղած է բարձր հեղինակութիւն ունեցող ռուս անձնաւորութեանէ մը:

Այդ անձնաւորութիւնը, զիտել տալէ յետոյ թէ կարսէն Էրզրում երկաթուղի մը, ընդ ամէնը հազիւ 120 քիլոմետր երկայնութեամբ, շատ աննշան ձեռնարկութիւն մըն է և չի կրնար Ռուսիան շահագրգռել, հետեւալ նըշանակելի յայտարարութիւնը ըրեր է, որ տարօրինակ լոյս մը կը սփռէ ռուս քաղաքականութեան ընդհանուր ու ահարկու ուղղութեանը վրայ. — «Մենք աստից աւելին կը պահանջենք: Կ'ուզենք որ մեզի հաւաստիք տրուի թէ Թիւրքիոյ հիւսիսային կամ հիւսիսային—արեւելեան ու և է կողմը ապագային ոչ մէկ երկաթուղի պիտի շինուի, բայց միայն մեր ձեռքով: Պէտք է ըսել թէ, այս ենթադրութեան հիման վրայ, մենք ու և է տարկութիւն չյարուցինք Պաղտատի երկաթուղիին դէմ: Գերմանական սէստիքան քաջ գիտէ աստիկա, քանի որ անմիջապէս բողոքեցինք երբոր ներկայացուց իր սկզբնական և աւելի շահաւոր ծրագիրը՝ երկաթուղին աւելի հիւսիսէն անցընելու:»

«Մենք սկիզբէն ի վեր մտքերնիս դրած ենք մեր Թիֆլիս—Կարսի երկաթուղին մինչեւ Էրզրում քշել, բայց Դըրան հետ մեր հիմակուան բանակցութիւններուն նպատակն է մեզի վերապահել այդ երկաթուղիին ամբողջացումը՝ կատարեալ ցանցով մը: Ատիկա մեզի համար էական կարևորութիւն ունի, որովհետև ապագային կարող պիտի ըլլանք միացնել զայն մեր առաջագրած պարսկական երկաթուղիին, որով երկու երկիրներուն շահերն ալ պիտի օգտուին:»

«Մենք Պարսկաստանի մէջ կ'ուզենք ո'չ միայն ուղղակի գիծ մը դէպի ծովը, հապա նաեւ ուրիշ գիծ մը Պարսկաստանի հիւսիսակողմը, որ հին կայսերական ճամբէն պիտի անցնի և մեր կովկասի երկիրները թէ՛հրանի ճամբով պիտի միացնէ մեր կեդրոնական Ասիոյ երկաթուղիին Գուշէի մէջ (Աֆղանիստանի սահմանազրկի վրայ ռուսական երկաթուղիին վերջին կայանը): Այս բոլոր գծերը պէտք է որ շինուին: Անգամ մը որ աւարտին, կրնանք հանդարտ մտքով սպասել կեդրոնական Ասիոյ եւ Հնդկաստանի մէջ գործերուն ընթացքին:»

«Արեւելքի մէջ մենք այնչափ զոհողութիւն բրտծ

ենք որ չենք կրնար թող տալ որ ատոր պտուղ՝ հրը արեւմտեան ազգերը միայն քաղեն: Պէտք է բնականաբար որ մեր ջանքերը վարձահատոյց ըլլան մեզի աշխարհի այդ մասին մէջ: Ամէն պարագայի մէջ, մեր մտածումը բոպէ մը իսկ ծածուկ պահած չենք գերման գիւտնագիտութեանէն:»

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԴԻՐՔԸ

Իրօք ալ, բազմաթիւ նշաններ կան ցոյց տուող, ինչպէս Պերլինէն կը հաղորդեն Սթանտարտի, թէ այդ երկաթուղիներու հարցին մասին տեսակ մը համաձայնութիւն գոյացած է Գերմանիոյ եւ Ռուսիոյ միջեւ:

Պերլինի կէս պաշտօնական թերթերը կը բացատրեն թէ ռուս կառավարութեան տրուած երկաթուղիի արտօնութիւնները ու եւ է կերպով չեն հակառակի գերմանական շահերուն: Գերման կառավարութիւնը, կ'ըսեն, շատոնց տեղեակ էր թէ ռուսական քաղաքացանութիւնն էր Ռուսիոյ եւ օսմանեան Հայաստանի միջև ոչ—ռուսական ու եւ է երկաթուղիի շինութիւնը անկարելի դարձնել: Կ. Պոլսէն կը հեռագրեն Լօքայ Անցայկըրի թէ կարս—Էրզրումի երկաթուղիին շինութիւնը՝ գերմանական Պաղտատի գծին շինութեան հետ միեւնոյն ատեն պիտի սկսի:

ԵՒՐՈՊԱ ԵՒ ԹԻՒՐԿԻԱ

Անգլիական թերթերը, որոնք անցեալ տարի, օրինակի համար, միահամուռ ձայն կը բարձրացնէին ամէնէն աննշան յաջողութիւններուն համար զորոնք ռուս քաղաքականութիւնը ձեռք կը բերէր Պարսկաստանի կամ Թիւրքիոյ մէջ, այսօր կը շատանան հեռագրական լուրերը արձանագրելով, առանց մեկնութեան: — Սթանտարտի Վիլնիւայի թղթակիցը Թիւրքիոյ նկատմամբ Էւրոպայի այժմու ընդհանուր քաղաքականութիւնը կ'ամփոփէ հետեւեալ կերպով.

«Հարաւային Ափրիկէի պատերազմը սկսած օրէն, վախը սուլթանին սիրտն առաւ թէ աստիկա աննպաստ հետեւանքներ պիտի ունենար իրեն համար. ապաքէն, միշտ այդ երկիւղը ունեցած է ամէն անգամ որ դժուարութիւններ ծագին մեծ պետութեանց միջեւ: Այս անգամ, իրականութիւնը ցոյց տուաւ թէ իր երկիւղը արգարացի էր: Պատերազմը սկսելէն ետքը, Ռուսիոյ դեսպանը ստիպողական խոստում ուզեց թէ այն գծերուն մասին որոնց մէջ Ռուսիա շահ ունի իբր դրացի պետութիւն՝ ուրիշ ոչ մէկու արտօնութիւն պիտի տրուի բայց եթէ ռուս զրամատէրներու—որ է ըսել նոյն ինքն Ռուսիոյ: Կ. Պոլսոյ մէջ կարծիք կայ թէ սուլթանը քիչ մը աճապարանքով տուաւ այդպիսի խոստում մը՝ առանց կանխադրան կարծիքը առնելու, և թէ հիմակ շատ վրդոված է, մանաւանդ որ ռուսական նորոգ փոխատուութիւնը Պարսկաստանի՝ ցոյց կուտայ թէ իր խոստումը ինչ հետեւանքներ կրնայ ունենալ: Այս շուարումէն ազատելու միջոց մը պիտի ըլլար իրեն համար մերժել իր վերջնական վա-

ւերացումը Պաղտատի երկաթուղիին արտօնութեան՝ որ զեռ վերջնապէս արուած չէ Գերմաններուն, եւ ըսել թէ այսուհետեւ թիւրքիա ինք պիտի շինէ ու վարէ ամէն երկաթուղի կայսրութեան մէջ: Գերմանիոյ եւ Ռուսիայ միջեւ արտօնութիւններու և խոստումներու համար մըրցումը այդ կերպով վերջ պիտի գտնէր: Բայց ամէն մարդ գիտէ որ թիւրքիա կարող չէ այդպիսի բեռ մը ստաձնել: Հետեւաբար, թէ՛ Գերմանները և թէ՛ Ռուսերը իրենց արտօնութիւնները պիտի ստանան, և, եթէ ուրիշ պետութիւն մը այս գործին չմիջամտէ, թիւրքիա պիտի պարսկաճայ, այսինքն թէ Ռուսիա եւ Գերմանիա անոր հետ պարսկական օրինակին համեմատ պիտի վարուին, ինչպէս ըրին Չինաստանի հետ՝ ճարտարական պատերազմէն յետոյ: Աւստրիա եւ Իտալիա կարող չեն շարժիլ՝ Գերմանիոյ պատճառաւ, և Ֆրանսա՝ Ռուսիոյ պատճառաւ:»

Կը մնայ անշուշտ Անգլիան: Բայց Անգլիան այսօր ամէն կնճոտ հաշիւներուն մէջ լայնուող անձանօթն է:

ԿՈՎԿԱՍԻ ՀՍՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

Ինչպէս քիչ մը վերը կ'ըսէինք, Կովկասի դժբաղդ գաղթականներուն խնդիրը լծակ մըն է Ռուսիոյ ձեռքը զոր ուղած ատենը կը գործածէ թիւրքիոյ դէմ: Ի պատասխան ուսական ծանուցագրին որ այդ խնդիրը անպամ մը ևս կը յարուցանէր, արտաքին գործերու նախարար թէվֆիգ փաշա փետրուար 20ին ուսական զեւպանատունը երթալով, ի միջի այլոց այդ խնդրին մասին ալ խորհրդակցութիւն մը ունեցեր է: Յաջորդ օրը, թալալի հեռագիր մը կը ծանուցանէր թէ սուլթանը բոլոր ուժովը կ'ընդդիմանայ Հայ գաղթականներուն դարձին: Բայց կը ծանուցուի թէ փետրուար 23ին սուլթանին հետ ունեցած յիշատակելի տեսակցութեանը մէջ, Պ. Չինովիէվ չէ մտացեր այդ խնդիրը նորէն յիշեցնելու սուլթանին:

ԹԻԻՐԲԻՈՅ ՍՊԱՌԱՋԻՆՈՒՄՆԵՐԸ

Վերջին լուրերուն նայելով, թիւրքիա իր սպառազինութեանը առաջ տանելու վրայ է: Արագհարուածեան թնդանօթներ գնելու խնդիրը, որ շատոնց է առկա կը մնար, լուծուելու մօտ է: Առ այժմ, որոշուած է 96 այդ օրինակ թնդանօթ ապսպրել Գրուսիի զինագործարանին:

Այդ թնդանօթները 1897ի օրինակէն են: Գերմանիոյ կայսրը, որ գերման ճարտարագործութեան շահերը առաջ քշել զիտցող մէկն է, ատոնցմէ հատ մը անցեալ ասորի նուէր բաւ սուլթանին: Այդ հրանօթները նորագոյն կատարելագործութեանց համեմատ շինուած են, և սահմանուած են երկրորդ և երրորդ զօրաբանակներուն մէջ (Էսիրնէ և Սէլանիկ) երկուքական գունդ զինելու:

Գալով Մազկերի հրացաններուն, զինուորական առաջին չօրս շրջանակներուն Նիզամ ու Բէտիֆ վաշտերը այդ զէնքով զինուած են, առաջին երեքը՝ 7.65 միլիմէթրոց մազկերներով, և չորրորդ զօրաբանակը (Երզնկա) 9.5 միլիմէթրոց մազկերներով:

Այսօր, այդ հրացանը կը գործածեն 184 վաշտ Նի-

զամ և 256 վաշտ Բէտիֆ: Ըսել է իբր 450,000 մազկեր բաժնուած է զօրքերուն, ու կ. Պոլսոյ մէջ պատրաստ կայ 250,000 հատ: Հիմակ, մտադրութիւն կայ 220,000 հատ ալ գնել՝ Նիզամ եւ Բէտիֆ բոլոր զօրքերը այդ հրացանով զինելու համար:—Միանգամայն մեծ գործունէութիւն կը տիրէ բանակի հիւանդանոցները վերակազմելու գերմանական դրութեան համաձայն: այդպիսի երեք հիւանդանոց պատրաստ են արդէն:

Աւելորդ է խօսիլ այն զեղծումներուն մասին սրոնք տեղի կ'ունենան այսպիսի խոշոր ծախքերու առթիւ: Օրինակ մը կը բաւէ: Քէօնի մէկ տան հետ պայմանագրութիւն կնքուած է 270,000 քիլօ անձուկ վառող գնելու՝ քիլօն 65 դրուշէն, ինչ որ ասորապայման գին մըն է: Ղազի Օսման փաշա և Բէտիֆ փաշա սուլթանին մատնանիչ բրած են գործուելիք ահագին զոգութիւնը. բայց պալատին և թօփանէի մարդիկը, որոնք խոշորկէկ միջնորդըններ ունին գերմանական տունէն, յաջողքը են գործը քաշեցնելու:— Գերմանական նոյն տունը յանձն առած է 40,000 սակիով վերակազմել Չէլթուն—Պուրնուի վառօգարանը:

ՕՏԱՐՆԵՐԸ ԹԻԻՐԲԻՈՅ ՄԷՋ

Սուլթանը, հասկնալով թէ օտարներուն շահերը ո՛րքան աւելի շատնան թիւրքիոյ մէջ, այնքան աւելի առիթ պիտի ունենան անոնք երկրին վատթար վարչութեանն նեղուելու և ատոր դէմ բողոքելու, մէկ քանի փորձեր բրաւ վերջերս այդ օտար շահերը չէզոքացնելու, — փորձեր սրոնք իրեն համար պարտութիւններ եղան:

Կայսերական հրամանին վրայ, պետական խորհուրդը նոր փոփոխութիւններ մտցնել կը ծրագրէր թիւրքիոյ հանքերու օրէնքին մէջ, որոնց համեմատ այսուհետեւ օտար հպատակներու հանքային ու ե արտօնութիւն պիտի չտրուէր, օտարները պիտի չկրնային հանքեր բանեցնել կամ անոնց շահագործման մասնակցիլ, « եւ է հանք վարձու պիտի չտրուէր օտարներու, եւ վերջապէս՝ թիւրքիոյ մէջ հանք ունեցող օտարները պիտի չկրնային իրենց իրաւունքը ուրիշ փոխանցել, բայց եթէ օսմանեան հպատակներու:

Այս անօրինութիւնը շատ գէշ տպաւորութիւն ըրաւ օտար կառավարութեանց վրայ, որոնք շատ բանի կը ներեն, բայց չեն հանդուրժեր իրենց հպատակներու «ւզ» սեղակի շահերուն վտանգմանը: Այդ նոր անօրինութեան ամէնէն աւելի փնասուողը պիտի ըլլային Անգլիացիները, որովհետեւ օսմանեան հանքերու յատկացուած զրամագլխին մեծագոյն մասը անգլիական է: Գեւպանները մեծ եռանկով խնդիրը ձեռք առին, և, իրարու ետեւէ, համանման ծանուցագրեր տեղացուցին Դուրը, բողոքելով առաջադրուած փոփոխութեան դէմ իբր հակառակ միջազգային դաշնագրերու, եւ բողոքովին ապօրէն:— Այս միահամուռ բողոքին առջեւ ուրիշ բան չէր մնալ ընելիք եթէ ոչ տեղի տալ, ու սուլթանը՝ գլխիկոր՝ հրաժարեցաւ հանքային օրէնքը փոխելու զիտաւորութեանն:

Դեպքանները սակայն այդ կարգի մէկ քանի ուրիշ գծուարութիւններ ունին զեռ լուծելիք:

Անգլիական զեպանատունը ազգու բողոք մը բարձած է Դրան՝ սուլթանին մէկ իրատէին գէժ որ օսման, եան հպատակի մը կը շնորհէ Ղալաթիա-Բերայի թիւնէին շահագործման արտօնութիւնը: Այդ թիւնէլը անգլիական ընկերութեան մը ձեռքն է, որ զեռ 17 տարի պայմանաժամ ունի, ու նաև նախապատուութեան իրաւունք մը արտօնութեան վերանորոգման համար՝ յաւարտ այդ պայմանաժամին:

Գերմանական զեպանատունն ալ գծուարութեանց կը հանդիպի կոր այն ընդարձակ գետնին համար զոր սուլթանը Պաղեստինի մէջ Գերմանիոյ կայսեր նուիրեց, եւ որուն սեփականութեան թղթերը տակաւին Վիլհելմ կայսեր յանձնուած չեն...: Երուսաղէմի կառավարչին և Սուրիոյ կուսակալին հրահանգ տրուած է բացէ ի բաց արգիլել ո եւ է գերման գաղութի հաստատումը, ո եւ է երկրագործական ընկերութեան կազմութիւնը կամ հողի գնումը օտար հպատակներու կողմէ: Կը կասկածուի թէ այդ հրամանները թելադրուած են ուսական ազդեցութեանն, որ, հիմակ, նորէն կը տիրապետէ Կ. Պոլսու:

Լ. Չ.

ՃԱՄԱՆՅ

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԲԱՐԻՉ

Բարից, 24 փետրուար 1900

Օրադիրներն անշուշտ տեղեկացաք օսմանեան պատուիրակութեան մը Բարից ժամանումը: Ճելատ պէյի եւ Ապտուլահ փաշայի պաշտօնին բնոյթը որակող հետեւեալ զեկօցումը իգտաւէն թարգմանելով կը հաղորդեմ Նոր Կեանքի ընթերցողներուն. «Ն. Կ. Վեհափառութիւնը բարեհաճեցաւ իւրօրակի ակնակուս պատուանշանը «շնորհել Ֆրանսայի Հանրապետութեան նախագահ և «Թունուզի վալի Միսիւ Լուպէին, ի վարձատրութիւն իր «բարուք ծառայութեանց»: Այդ շքանշանը բերող պատուիրակութեան փետրուար 17ին փառաւոր խնջոյք տրուեցաւ Էլիզէի, կամ ըստ նոր անուանակոչութեան, Էլիզէ-Երլտըզի նախագահական պալատին մէջ: Սեղանին մասնակցող Ֆրանսացիի մը բարեացակամութեանը կը պարտիմ կարգ մը տեղեկութիւններ, որոնք թէեւ շատ հետաքրքրական, բայց ներքին քաղաքականութեան նկատուածներով ամբողջապէս չհրատարակուեցան բարիզեան թերթերուն մէջ:

Ճաշացուցակը իր տեսակին մէջ նորութիւն մըն է որ զանազան մեկնութեանց տեղի կուտայ: Օսմանեան պատուիրակները այդ մընիքին մէջ տեսան Հանրապետութեան կողմէն սուլթանին ընծայուած ակնածալիր մեծաբանքի արտայայտութիւն մը. իսկ Ֆրանսացիները նրբին

հեղնութիւն մը նշմարեցին: Ես բաւական կը համարիմ զայն ճշգրտօրէն օրինակել, որոշումը ձեր ընթերցողներուն իմացականութեանը ձգելով: Ահաւասիկ.

Ստարու «կարմիր սուրբան»

Հաշիք «գագառչեռ»

Տիէրի պարպիւ ա յա «հայր Սալվարոյ»

Հորթի երրուծ «ա յա Մագհար պէյ»

Թրիշֆոյ ոսկեգոյն փասիակ ա յա «Տէպա»

Հաստեայ կտցարի «սօփաձի»

Աղցակ հազարի «խաւզեղակոչեր»

Պաղպաղակ «Քապիկէ Նոշա»

Այս բարիզեան մընիքն հայ ընթերցողներէն ոմանց կատարելապէս հասկնալի ընելու համար քանի մը բացատրութեանց պէտք ըլլայ թերևս:

Մեկնութեան կարօտ է սակայն կարմիր ստաբուսին նուիրումը Ապտիւլ-Համիտին:

«Ան բօքօթ» եփուած հակիթին՝ պատշաճ տեսնուեցաւ «գագառուէտ» անունը տալ, յիշեցնելու համար այն բազմաթիւ հայ երիտասարդները որոնք, սուլթանէն հալածուած, չորս տարի է Բարիցի փողոցները «գագառուէտ» ծախելով «կեանքերին կը հանեն» — բացատրութեան երկու իմաստովն ալ:

Հայ ժողովուրդը մոռցած չէ Ֆրանսայէն պաշտպանեալ իտալացի քահանայ Հայր Սալվաթօրը զոր գնդապետ Մագհար պէյ Կիլիկիա կտոր կտոր ընել տուաւ: Պարպիւ մօրոշաւար ձուկը ձեր միտքը չի բերեր մօրուեղ Հ. Սալվաթօրը, որուն խողխողումը, նախատինք մը Ֆրանսայի համար, օսմանեան բանակին ևն փայլուն յաղթանակներէն մին կը յիշեցնէ:

Մագհար պէյի անունը Հայր Սալվաթօրինէն անբաժան է. ձուկէն ետքը մեղէնը: Գիրուկ հորթը, Մագհարի ձօնուած, ամէն մտքի առջեւ կը պատկերացնէ պարարտ թիւրք փաշան կամ պէյը: Սուլթանին պատուիրակները այս յորժոյժումէն շատ ու շատ խնորձեր են:

Ոսկեգոյն փափանը ճշգրիտ խորհրդանշանն է Տէպա օրագրին, ևն հեղինակաւոր ներկայացուցիչը ոսկեգին մամուլին:

Կտոր կտոր ջարդուած խեղճ թռչուններուն խնդակը, կտցարի հաստեան, չի յիշեցնել կտորտուած խեղճ Հայ յերու զանդուածը, զուկ-չործոց սուլթանին Սփաֆիններուն զիւցագնական արութեանը:

Դառն հեղնութեամբ մը այդ զանդուածին կը յաջօրբէ բնական կարգով, հազարի աղցանը, խաօգեղի յիշատակին նուիրուած: Սալվաթայի պէս ջարդուեցան խաօգեղի խեղճերը, որ ամբողջ օգոստոս 26ի մանրանկարը կը ներկայացնեն:

Իսկ ևն թարմ նորութիւնը «քապիկէ նուառ»ն է, սև խցիկը: Պոլսոյ Ֆրանսական թղթատունը հիմակ զեպանատունէն արտօնուած է թիւրք իշխանութեան յանձնելու բոլոր այն կասկածելի նամակները որոնք զաղտնապէս կը բացուին սև խցիկին մէջ: Ենորհիւ այդ սև խցիկին ձերբակալուողները՝ թիւրքիոյ բանտերուն մէջ մահուան պաղ պաղ քրտինքները չեն թափեր:

Այս ճաշացուցակը անակնկալ մըն էր օսմաննան պատուիրակութեան համար. բայց սուլթանին ներկայացուցիչներն ալ ուրիշ անակնկալներու շարք մը պատրաստած էին: Օսմանեան զեսպան Միւսիբի պէյ սեղանին վրայ հաղորդեց թէ « իր վեհափառ տէրը բարեհաճած է Միւսիբի Լուպէն կուսակալ անուանել թուճուզի », որ, ինչպէս զիտէք, օսմաննան աշխարհադրութեանց մէջ միշտ իբր թիւրք վիսայիք մը նշանակուած է: (Տես, եթէ կ'ուզես, Ս. Փրկչի Հիւանդանոցին այս տարուան օրացոյցը:)

Ու այս, եւ միանգամայն իմքիս շքանշանին շնորհման առթիւ, սուլթանը բարեհաճած է միւսիբի Լուպէնի տիտղոսը փոխել՝ աստիճանի բարձրացմամբ: Սեղանին ներկայ գտնուողները անսպասելի նորութեան մը ակնկալու էին, առանց կարենալ գուշակելու, երբ Միւսիբի պէյ բարձրաձայն յայտարարեց. « Վեհ. սուլթանը ձեր պէյութեան տիտղոսը կը փոխէ, եւ ձեզի կը շնորհէ փաշայութեան տիտղոսը: Այսուհետեւ փոխանակ Լուպէնի պիտի կոչուիք Լուպիշա: »

Այս կայսերական շնորհը որոտընդոստ ծափահարութիւններով ընդունուեցաւ: Նախադահը աչքերը արցունքներով լեցուն, ոտքի ելաւ և զողոջուն ձեռքերը իրարու զարնելով գոչեց. « Փատիշա չօ եաշա », — զոր Կ. Պոլսոյ ֆրանսական զեսպան Պ. Գոնսթան, այդ գործին համար յատկապէս վազած Բարիզ եկած, շարժուան մը շարաշար յոգնութեամբ սորվեցուցած էր փաշացուին:

Դուրսը Մարսիլէի նուագածունները Համիտիէ մարշը հնչեցուցին:

Պատուիրակութիւնը ի միջի այլոց այցելեց Էնվալիտը և Նաբոլէոնի զերեզմանը: Անակնկալ մըն ալ հող: Ճէվատ պէյ պաշտօնապէս ծանուց թէ սուլթանը բարեհաճած է Ղազի տիտղոսը շնորհել Նաբոլէոնի, որ ասկէ ետքը պատմութեան մէջ պիտի կոչուի Ղազի-Նաբոլէոն... Ղազի-Համիտի նման:

Պատուիրակութեան աչքէ անցընել տուին նաև Էնվալիտի զինարանը, ուր հին ու նոր բոլո զէնքերու կատարեալ հաւաքածոյ մը կայ: Պատուիրակները սաղայն շատ հիացած ըլլալու կերպ մը շնորհին: Ֆրանսացի սպաները այս մասին համարձակեցան նկատողութիւն մը ընել, ու Ճէվատ պէյ անկեղծօրէն յայտնեց իր մտածումը.

— Մի՛ կարծէք թէ ձեր ըսածին չափ կատարեալ է այս հաւաքածոն: Էն կարևոր զէնքը պակաս է: Ո՛ր են սօփաները, քաջերու միակ զէնքը: Դարձիս պիտի խնդրեմ մեր օգոստափառ տիրոջմէն որ հաճի իր Երլտըզի մթերանոցէն մէկ քանի սօփա զրկել ձեզի իբր նմոյշ:

Նամակս փակած բոպէիս Պոլսէն ստացայ նոր իգոտաններ: Կը յիշէք թէ Օռօսի երեք խմբագիրներ սուլթանին զէմ ծանր յօդուածներ հրատարակած ըլլալուն համար պատ բացուած էր իրենց զէմ, որ յանկարծ ետ առնուեցաւ: Գաղտնիքը կը պարզուի, ահա ի՞նչ կը գրէ իգոտան. « Յայտնի է թէ Բարիզի թափառաշրջիկներէն (սէրսէրի կիրուհիներէն) Բիլլեր, Կէվիլէ և Մէլէթու անուն անխելքները կայսերական կառավարութեան նկատմամբ անվայել լեզու մը գործածած էին: Ֆրանսայի կառավարութիւնը այդ յի-

մարները խոսիլ պիտի պատժէր, բայց Ֆրանսայի արտաքին գործերու նախարար Միւսիբի Տէլիքեասէի և Կ. Պոլսոյ զեսպան Միւսիբի Գէլիսթանի ազաշանքին վրայ՝ Ն. Կ. Վեհափառութիւնը բարեհաճեցաւ ներում շնորհել անոնց: Երեք ներեալները Բարիզի օսմաննան զեսպանատան միջոցաւ իրենց երախտագիտութիւնը յոստ կայսերական զահոյից զրին: »

ՍԿԵՊՏԻԿ

ԼՈՒՐԵՐ

ՆՇԵԱՐ ՄԸ. Բարիզի քերթերուն մէջ կը կարդանք թէ փետրուար 22/ին, Օրիլ Տրոսօի (աճառքներու տուն) 7րդ սրահը պիտի վաճառուի, արևելեան շատ մը հրկուրիներու և արժեքաւոր առարկաներու հետ, հայկական եկեղեցական քաղ մը:

« Հայ քառասունի սաղաւարտ մըն է սակիս ոսկեգօծ արծաթի—կ'ըսեն քերթերը—, որ կամարաձև շրջանակներու մէջ կը ներկայացնէ Բրիտանոսը և առաքելները. վրան, հրեշտակներ դրոշաւուած են: Այս քառասունի քաղը, որ կըր գուակի մը ձեռք ունի աւելի, հին ու հազուագիշտ է: Եկեղեցական նոյն զարդին մաս կազկող գօսի մը, նոյնպէս ոսկեգօծ արծաթի, հին հայերէնով հետաքրքրական արձանագրութիւն մը կրէ՝ որ կը յիշէ վանքի՛ն՝ որուն կը վերաբերի՛ր՝ եւ նոյնատունի՛ն անունները: »

Չեք գիտեր թէ աճառքի յիպոսածը որուն ձեռքը բողած է հիմակ այդ հայկական նշխարը, բայց կարելի չէ չմտածել իրերու այն տարօրին դարձադարձի վրայ որ ո՛վ գիտէ հայ աշխարհին ո՛ր անկիւնէն այդ բեկորները առած նետած է Բարիզ: Արիւնագանգ բարբարոս ձեռքեր էին գոռոց որ խլեցին զանոնք խաղաղիկ տաճարին որուն շրջապատէն կ'աւելցնէին դարերի ի վեր, և ընչաքայքայ ձանկերու մէջ հետոյն տեղադրուելով, Բարիզ կ'ընկային հիմակ տունը՝ անկից երբայր համար զեպի անծանօթ ձախտագրականութիւնները:

Արիւնի, աւերումի ու պղծութեան անբողջ վեպ մը գոռոց՝ Հայկական այդ խեղձ խլեակները:

ՊԵՐՈՒԹԷՆ Րիշերի հետագիր մը փետրուար 17/ին կը ծանուցանէր թէ Սայուսի խալաները վիրաւորներ են տեղին անգլիայի զեր-հիշապատուին՝ Պ. Շիպի Ապիլայի՝ որդի, և պաշարներ են անգլիական հիշապատու սարսեր: Պերոսի կոչուակալը գօրք զրկեր է Պ. Ապիլայի օգնութեան, և Պերոսի ընդհանուր հիշապատուսն ալ խառվորեան վայրը փոռացեր է: Անկից ի վեր, ու եւ լոյր չտրուեցաւ այդ եղելութեան մասին:

ՆՈՐ ԿԵՍՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին զրկել առ

L. FRANK,
32, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W.